ԳԱՆՁԱՐԱՆ
ԱՂՕԹԻՑ

Զաղօթս իմ Տեառն տաց առաջի
ամենայն ժողովրդեան նորա։

ԳԱՆՁԱՐԱՆ ԱՂՕԹԻՑ

ԲԱՑԱՏՐՈՒԹԵԱՄԲ

ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ

ԵՒ ՆՇԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

ՀԳԵՍՏՈՒՑ ՊԱՏԱՐԱԳՉԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿԵԱԼ

Ի ՀՈԳԵՒՈՐ ՄԱՏԵՆԻՑ Ս. ՀԱՐՑ

Ի ՊԷՏՍ ՋԵՐՄԵՌԱՆԴՆ ԱՂՕԹԱՍԻՐԱՑ

Դ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

1951

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Զ.

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. ԵՂԻՇԵԱՅ

ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՊԱՏՐ. ՏԵՂԱՊԱՀ

ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ



Ս. ՅԱԿՈՎԲ ՎԱՆՔ ՀԱՑՈՑ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ահա Գառն Աստուծոյ՝ որ բառնայ զմեղս աշխարհի։

ԱՂՕԹՔ
ՏԷՐՈՒՆԱԿԱՆ

Որպէս պատուիրէ Փրկիչն մեր.

— Այսպէս կացէք դուք յաղօթս։
Մատթ. Զ. 9։

Հա՛յր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո։ Եկեսցէ Արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր։ Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց։ Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն. այլ փրկեա՛ զմեզ ի չարէ։ Զի քո է արքայութիւն և զօրութիւն, և փառք յաւիտեանս. Ամէն։

ԱՂՕԹՔ
Ի ՄՏԱՆԵԼՆ ՅԱՆԿՈՂԻՆ

Դո՛ւ ես պաշտպան իմ, Տէր, և ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ։

Առաքեա՛, Տէր, զհրեշտակ խաղաղութեան քո՝ որ եկեալ պահեսցէ զմեզ յանխռովս ի տուէ և ի գիշերի։



Հալածեա՛ ի մէնջ, Տէր, նշանաւ Խաչի քո զընդդիմամարտ և զաներեւոյթ գազանն, և մի՛ տար յապականութիւն զքո ժառանգութիւնդ։

ԱՂՕԹՔ

ԶԱՐԹՆՈՒԼՆ Ի ՔՆՈՑ

Կնքելով զդէմսդ նշանաւ սրբոյ Խաչին։

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. Ամէն։

Օրհնեա՛լ է մեռեալն և յարուցեալն ի մեռելոց Քրիստոս Աստուած, որ զարթոյց զիս ի մահահանգոյն քնոյ, խաղաղութեամբ անցուցանելով զգիշերս. աղաչեմ և խնդրեմ զի զմնացեալ ժամանակս խաղաղութեամբ պահեսցէ շնորհիւ և ողորմութեամբ իւրով. Ամէն։

ԱՂՕԹՔ

ԱՌԱՒՕՏԵԱՆ ԵՒ ԾԱԳՄԱՆ ԱՐԵՒՈՒ

Տէր, եթէ զշրթունս իմ բանաս՝ բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։ Օրհնեալ համագոյ և միասնական անբաժանելի սուրբ Երրորդութիւն, Հայր և Որդի և Հոգի Սուրբ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Ի գիշերի և ի տունջեան և յամենայն ժամու զքեզ աղաչեմք, և ի քէն խնդրեմք մարդասէր Տէր։ Լուր մեզ Աստուած Փրկիչ մեր, խոնարհեսցի ունկն քո ի խնդրուածս մեր, զի մի՛ ունայն լիցին վաստակք ծառայից քոց։ Այլ համարեա՛ զաշխատութիւնս մեր՝ ի գործ արդարութեան և ի

պտուղ Աստուածպաշտութեան։ Ընկա՛լ, Տէր, զաղօթս և զերկրպագութիւնս մեր, և հատո՛ մեզ զողորմութիւն քո առատապէս. ծածկեա՛ զմեզ ընդ հովանեաւ ամենազօր աջոյ քո։ Զօրացո՛ զմեզ, Տէր, զօրութեամբ սուրբ Հոգւոյդ։ Պահեա՛ զմեզ որպէս բիբ ական։ Եւ արա՛ առ մեզ նշան բարի՝ ի գովեստ և ի փառաբանութիւն անուանդ քում սրբոյ։ Զի ի քոյ փառս կատարի ամենայն արարածոց մշտնջենաւոր փառաբանութիւն ի բարձունս, Հօր և Որդւոյ և Հոգւոյդ Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

ԱՂՕԹՔ

ՅԵՐՐՈՐԴ ԺԱՄՈՒ

Հոգի՛ Աստուծոյ, որ յայսմ ժամու ահագին շնչմամբ իջեր ի վերնատունն բաժանելով զհրեղէն լեզուս, է՛ջ և առ մեզ յերրորդ ժամուս և լից զմեզ ամենայն բարութեամբ քով՝ իբրև զսուրբ զԱռաքեալսն, հանգչելով ի սիրտս մեր յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

ԱՂՕԹՔ

Ի ՄՏԱՆԵԼ ՅԵԿԵՂԵՑԻՆ

Զայր արիւնահեղ և զնենգաւոր պիղծ առնես դու, Տէր. այլ ես ըստ բազում ողորմութեան քում մտից ի տուն քո՝ և երկիրպագից ի տաճար սուրբ քո երկիւղիւ քո։

Եղիցին քեզ հաճոյ բանք բերանոյ իմոյ, և խորհուրդք սրտի իմոյ առաջի քո յամենայն ժամ, Տէր օգնական իմ և Փրկիչ իմ։

Մի՛ թողուր զիս, Տէր Աստուած իմ, և մի՛ ի բացեայ առներ յինէն. հայեաց յօգնել ինձ, Տէր, փրկութեան իմոյ։

ԱՂՕԹՔ

ՅԵԼԱՆԵԼՆ ՅԵԿԵՂԵՑԻՈՅՆ

Ողորմութիւն քո, Տէր, զհետ իմ եկեսցէ զամենայն աւուրս կենաց իմոց, բընակիլ ինձ ի տան Տեառն զամենայն աւուրս կենաց իմոց։

Սոսկալին Սերովբէից բառնայր
ինքեաւբ զփայտ խաչին մինչ
ի տեղին Գողգոթայի:

ԱՂՕԹՔ

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ

Ըստ ծիսի եւ ըստ աւանդութեան Հայաստանեայց Առաքելական Կաթողիկէ Ս. Եկեղեցւոյ՝ արարողութիւնք եւ պաշտամունք ի ժամու կատարման խորհրդոյ Սուրբ Պատարագի, հանդերձ նշանակութեամբ զգեստուց Պատարագչին։

ՔԱՀԱՆԱՅՆ

Նշանակէ զՏէր մեր, որ եղեւ ճշմարիտ Քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի. եւ զինքն ի ներքոյ տեսակաց Հացի եւ Գինւոյ՝ Հօր Աստուծոյ պատարագեաց։

ՍԱՂԱՒԱՐՏՆ

Նշանակէ զօրութիւն յաղթութեան Տեառն մերոյ, որով ել ի պատերազմ ընդդէմ Բելիարայ, եւ արար զփրկութիւն ազգի մարդկան։

ՇԱՊԻԿՆ

Նշանակէ զանմեղութիւն եւ զմաքրութիւն վարուց Տեառն մերոյ, եւ զմայլումն նորին երանական տեսութեամբ էութեանն Աստուծոյ։

ԲԱԶՊԱՆՆ

Նշանակէ զյօժարութիւն սրտի, եւ զպատրաստութիւն Տեառն մերոյ առ ի կատարել զհաճութիւն Հօրն երկնաւորի։

ՈՒՐԱՐՆ

Նշանակէ զհնազանդութիւն Տեառն մերոյ առ ի լնուլ զկենսագործ տնօրէնութիւնն իւր՝ ըստ նախասահմանութեան Հօրն երկնաւորի։

ԳՕՏԻՆ

Նշանակէ զողջախոհութիւն Տեառն մերոյ եւ զանխառնութիւն նորին ի զգայականաց ցանկութեանց։

ՇՈՒՐՋԱՌՆ

Նշանակէ զլրումն ամենայն առաքինութեանց, որով զարդարեալ էր մարդկութիւն Տեառն մերոյ ի սկզբանէ յղացման իւրոյ։

ՄՏԱՆԵԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ Ի ՍՐԲԱԶՆԱՏՈՒՆՆ

Նշանակէ զիջումն Բանին Աստուծոյ ի յարգանդ Ամենօրհնեալ կուսին Մարիամու։

ԶԳԵՍՏԱՒՈՐԻԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ

Նշանակէ զներմարմնութիւն Բանին Աստուծոյ ի յարգանդի Ամենեւրանուհւոյ կուսին Մարիամու։

ԵՐԳԵԼՆ ԴՊՐԱՑ
ԶԽՈՐՀՈՒՐԴ ԽՈՐԻՆ

Նշանակէ զաղօթս եւ զպաղատանս, զոր Նախահայրքն մատուցանէին առ Աստուած վասն զալըստեանն Տեառն մերոյ։

ԱՂՕԹՔ

Այս Մարգարէից ձայն խնկելի, որ զօրհնեալդ քո գալստեան զազատարարդ հրաման կանխաւ ազդէին, և զոր չէ բանիւ նիւթեղէն լեզուի ի թիւ արկանել վասն անբաւութեան, փոքունք են և նուազունք օրինակք և նմանութիւնք, հինք և ժամանակաւորք առ աւետեացդ քո յայտնութիւն և Խաչիդ փրկագործութիւն։ Որ յամենայն վայրի կառուցեր զխորանն վկայութեան արեան քո ուխտի, որք մեծաբարբառ միշտ աղաղակեն քան զդատակնիք մահուն Հաբելի զյաղթանակ բարեաց քումդ հանդիսի ի կեանս կրկինս և անմահականս, շնորհաց, մկրտութեան, յարութեան, նորոգութեան, առ քեզ ընտանութեան, ընդ Հոգւոյդ Սրբոյ

միութեան, քաւութեան, ազատութեան, լուսաւորութեան, մշտնջենաւոր մաքրութեան, իսկապէս երանութեան, ընդ վերնայնոցն կցորդութեան անկապուտ փառաց. ի շրթունս մեր ձայնիւ բարձրելոյն հաշտեցուցիչ բանից աղաչանք։ Եւ զոր ահաւորն է ասել, կարգեմ աստանօր յիշատակ եդեալ մեծիդ երախտեաց, Աստուած իսկ լինիլ ընտրութեամբ շնորհին, և ընդ հաստողիդ միանալ Տէրունի մարմնոյդ ճաշակմամբ, և ընդ լուսոյդ կենաց խառնութեամբ, զոր կատարումն երջանիկ խոստման ըստ Պօղոսի բանին, ոչ ունէր օրէնն։ Այլ դու փրկութիւն, եկիր հայրենիդ քո հարստութեամբ, արարեր և կատարեցեր զյուսոյն երկարաձգութիւն, որ առ քեզ պահեալ անհամառոտելի՝ քաւիչ ամենայնի։ Եւ քեզ փառք ընդ Հօր քում, ի գովեստ բարեբանութեան Հոգւոյդ քո Սրբոյ, յաւիտենից. Ամէն։

ԵԼԱՆԵԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ
Ի ՍՐԲԱԶՆԱՏԱՆԷՆ

Նշանակէ զծնունդն եւ զցայտնութիւն Տեառն մերոյ։

ԳՆԱԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ
ԱՌԱՋԻ ԲԵՄԻՆ

Նշանակէ զգնալ Տեառն մերոյ ընդ աշակերտաց իւրոց ի լեառն Ձիթենեաց։

ԱՂՕԹՔ

Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ ի մերձենալ ժամու չարչարանաց քոց՝ վասն տագնապաց ոգւոյդ սկսար երկնչիլ և հոգալ, չնորհեա՛ մեզ աւուրիս՝ զի ամենայն զհոգս և զտրտմութիւնս իմ՝ վերանուիրիցեմ քեզ պատիւ սրբազանից քոյոց չարչարանաց, և արդեամբք նոցին ընդունիցիմ զփրկութիւն հոգւոյ իմոյ։



Զայն Տեառն ի վերայ ջուրց
եւ Ասուած փառաց որոտաց
եւ Տէր ինքն ի վերայ ջուրց բազմաց:

ԼՈՒԱՆԱԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԶՁԵՌՆ

Նշանակէ զարտասուելն Տեառն մերոյ
ի լերինն Զիթենեաց։



ԱՂՕԹՔ

Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ ի յաղօթելն քո առ Հայր, փղձկմամբ սրտի հեղեր զարտասուս յաչաց քոց ի լուացումն մեղաց նախահօրն. չնորհեա՛ մեղաւորիս զճշմարիտ զղջումն, զի զտիւ և զգիշեր ողբալով զյանցանս իմ և խոստովանելով զմեղս իմ՝ ընդունիցիմ զներումն և զթողութիւն յամենառատ աղբերէդ կենաց։

ԱՍԵԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ
— ԽՈՍՏՈՎԱՆԻՄ ԱՌԱՋԻ —

Նշանակէ զանկանիլն Տեառն մերոյ ի վերայ երեսաց իւրոց, եւ զհեղուլն յինքենէ զքրտունս արեան։

Հայր, անցո՛ յինեն զբաժակս։

ԱՂՕԹՔ

Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ ի սաստկանալ երկանց քոց՝ զկայլակս արեան հոսեցեր ի մարմնոյ քումմէ, չնորհեա՛ մեղաւորիս՝ զի ի պատիւ չարչարանաց քոց, փոխանակ արեան՝ հեղից յաչաց իմոց զաղբիւրս արտասուաց։

ԵԼԱՆԵԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ Ի ԲԵՄՆ

Նշանակէ զաղօթելն Տեառն մերոյ բազմիցս
ի լերինն Զիթենեաց

ԱՂՕԹՔ

Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ յաղագս անանդորրութեան սրտի քո՝ չոքաբ կրկին և երեքկին աղօթել առ Հայր քո երկնաւոր, չնորհեա՛ մեղաւորիս զյարատեւութիւն ի գործս բարիս, զի արժանի լինիցիմ ընդունել ի քէն զխնդրուածս իմ։

ԱՍԵԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ
— Ի ՅԱՐԿԻ ՍՐԲՈՒԹԵԱՆ —

Նշանակէ զծնրադրութիւն Տեառն մերոյ
ի պարտիզի Զիթենեաց։

ԱՂՕԹՔ

Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ ծունր կրկնելով առ Հայր քո երկնաւոր՝ աղօթեցեր մարդկաբար՝ զի անցցէ ի քէն բաժակ չարչարանացն. շնորհեա՛ մեզաւորիս՝ զի յաւէտ ծունր կրկնելով երկրպագանիցեմ կենսատուիդ իմում հոգւով և ճշմարտութեամբ։

ՀԱՄԲՈՒՐԵԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԶՍԵՂԱՆՆ

Նշանակէ զմատնիլն Տեառն մերոյ։

ԱՂՕԹՔ

Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ համբուրիւ նենգութեան մատնեցար ի Յուդայէ. շնորհեա՛ մեզաւորիս՝ զի անխարդախ սրտիւ պաշտիցեմ զքեզ զամենայն աւուրս կենաց իմոց. և միշտ պատրաստ լինիցիմ առ ի կատարել զպաշտօն սիրոյ՝ ի դէմս սիրելեաց և ատելեաց իմոց։



Արծաթսիրութեամբն մոլեալ Յուդա զիւր
զմեծ զվարդապետն ընդ Երեսուն
արծաթոյ, Հրէիցն մատներ:

ԵՐԳԵԼՆ ԴՊՐԱՑ ԶՄԵՂԵԴԻ

Նշանակէ զխօսիլն Տեառն մերոյ քաղցրութեամբ ընդ Յուդայի՝ եւ ընդ ամփոխին ի պարտիզի։

ԱՂՕԹՔ

Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ վասն փրկութեան իմոյ ընդ դաւաճանողաց թըշնամեաց քոց քաղցրութեամբ և հեզութեամբ անդորրաբար խօսեցար ընդ նոսա, շնորհեա՛ մեզաւորիս՝ զի ըստ օրինակի կենսատուիդ իմում ընդ ամենայն հալածչաց իմոց և ատելեաց՝ համբերութեամբ և երկայնմտութեամբ վարիցիմ ի փառս անուանդ քում սրբոյ։

ԻԶԱՆԵԼՆ ՔԱՀԱՆԱՑԻՆ Ի ԲԵՄԷՆ

Նշանակէ զկապիլն եւ զածիլն Տեառն մերոյ ի պարտիզէն Զիթենեաց ի պալատն Աննայի։

ԱՂՕԹՔ

Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ ի յանողորմից և ի յամբարշտաց Հրէից ըմբռնե-

ցար, կապեցար և ածար իբրև զպարտաւոր, չնորհեա՛ մեղաւորիս՝ զի արդեամբ չարչարանաց քոց՝ արձակիցիմ ի կապանաց մեղաց իմոց, և կապակցիցիմ սիրով ընդ քեզ հաստատապէս։

ԵՐԳԵԼՆ ԴՊՐԱՑ
— ՈՐ ԳԵՐԱԳՈՅՆ —

Նշանակէ զաղաղակ դպրացն եւ փարիսեցւոց ի պալատին։

ԱՂՕԹՔ

Խոստովանիմ և հաւատամ ամենակատար, ինքնակատար և նախակատար, զհամագոյ եւ զպաշտելի, երկրպագելի եւ գերագոյ զամենասուրբ զԵրրորդութիւնն զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին։ Հայր անծին և անսկիզբն՝ ծնող Որդւոյ և յառաջաքող Հոգւոյն Սրբոյ։ Իսկ Որդին ծնեալ ի Հօրէ նախ քան զյաւիտեանս անմարմնաբար և անժամանակապէս։ Եւ Հոգին Սուրբ Բղխեալ ի Հօրէ անհատաբար և անսպառապէս, համագոյակից Հօր և փառակից Որդւոյ։ Միութեամբն բաժանեալ յերիս յան-

ձինս, և երրորդութեամբն միացեալ ի մի բնութիւն և ի մի Աստուածութիւն։ Եւ արդ՝ աղաչեմք զքեզ Հայր երկնաւոր, միջնորդութեամբ միածնի Որդւոյ քո, և գթութեամբ Հոգւոյդ Սրբոյ, տուր մեզ, Տէ՛ր, Հոգի զգաստութեան, Հոգի խորհրդոյ, Հոգի հեզութեան, Հոգի զօրութեան, Հոգի իմաստութեան, Հոգի գիտութեան, Հոգի երկիւղի և աստուածպաշտութեան. և լից ամենայն բարեգործութեամբ, որպէս զի զկամս քո արարեալ յայսմ աշխարհի, եղիցուք արժանի ողորմութեան քում ի հանդերձելումն շնորհօքն Քրիստոսի. ընդ որում քեզ և Հոգւոյդ Սրբոյ վայելէ փառք, պատիւ և երկրպագութիւն յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ հեզութեամբ և խոնարհութեամբ համբերեցեր խրոխտանաց և սպառնալեաց դպրաց և փարիսեցւոցն վասն փրկութեան իմոյ, շնորհեա՛ մեղաւորիս, զի երկայնմտութեամբ համբերիցեմ ընդդէմ ամենայն ոտնահարութեանց՝ երեւելեաց և աներեւութից թշնամեաց իմոց։



Զիմանալի լոյսդ ի գիշերին՝
ջահիւք եւ սուսերօք եկեալ
ըմբռնել զանըմբռնելիդ։

ԴԱՌՆԱԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ Ի ԲԵՄՆ

Նշանակէ զտանիլն Տեառն մերոյ ի պալատն Պիղատոսի։

ԱՂՕԹՔ

Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ ի քահանայիցն և ի ծերոցն մատնեցար իբրև զմահապարտ ի ձեռն Պիղատոսի, չնորհեա՛ մեղաւորիս զի զօրութեամբ չնորհաց քոց ազատիցիմ ի մատնութենէ ի ձեռս իշխանին խաւարայնոյ և արբանեկաց նորին։

ԵՐԳԵԼՆ ԴՊՐԱՅ ԶՇԱՐԱԿԱՆ

Նշանակէ զամբաստանութիւն եւ զչարախօսութիւն ամբոխին ժողովելոյ։

ԱՂՕԹՔ

Իւղ թափեալ անուն՝ միածին Որդի Աստուծոյ՝ Աստուած ճշմարիտ, որ յանճառական փառաց խոնարհեցար ի հայրական ծոցոյ, և առեր զմարմին ի սուրբ և յանշաղախ. կուսէն Մարիամայ. եղեր մարդ ճշմարտապէս՝ անփոփոխելիդ ի յէութեան,

անցանելով ընդ ամենայն կիրս մարդկային՝ բաց ի մեղաց. ի յերկրի երեւեցար և ընդ մարդկան շրջեցար, և կատարեցեր զամենայն ըստ օրինացն. լրումն լինելով Մարգարէից և օրինաց. զանիմանալի և զանհասանելի անուշահոտութիւն Աստուածութեանդ բուրեցեր յաշխարհի՝ հաղորդելով զամենեսեան երկնաւոր և առատաբաշխ պարգևիդ, ի յոր կցորդիլն զմայլեալ անմահացան տիեզերք։ Եւ արդ՝ զու նոյն ինքն բարերար եւ բազումողորմ, բաց զքիմս մտաց իմոց հոտոտիլ ի հոտոյ անուշից մարմնոյ Աստուածութեան քո, և ընկա՛լ զաղօթս մեր իբրև զխունկ անոյշ և որպէս զՊատարագն Աբելի, Նոյի և Աբրահամու, և իբրև զբանաւոր պատարագս սրբոց քոց և սիրողաց անուան քո, որք ի սկզբանէ հաճոյ եղեն քեզ, որոց մասին և մեզ լիցի ժառանգութիւն շնորհօք Միածնիդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։



Ածին զնա առ Պիղատոս:

ՇՐՋԱԲԵՐԵԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ
ԶՍՈՒՐԲ ԱՒԵՏԱՐԱՆՆ

Նշանակէ զշրջաբերումն տեառն մերոյ ի տանէն Պիղատոսի առ տունն Հերովդի։

ԱՂՕԹՔ
ՅԵՏ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԻՆ

Սուրբ Աստուած անմահ և հզօր. որ սրբաբանեալ պաշտիս ի հրեղէն և անմարմին զուարթնոցն, անլռելի և անդադար օրհնաբանութեամբ. զոր եւ Սերովբէքն սոսկալի և ահեղագոչ ձայնիւ երգեն զերգս երեքսրբեան՝ բարեբանելով զանմահ Տէրութիւնդ, և Քերովբէքն գովասանական ձայնիւ փառաւորեն զանբաւազօր Աստուածութիւնդ, և ամենայն զօրութիւնքն վերնական գոհաբանեն երկրպագութեամբ, փառաւորելով զամենազօր Թագաւորութիւնդ։ Ընդ որս և մեք բանաւոր հօտ քո, և ընտեղծուածք անարատ ձեռաց քոց, ժողովեալ ի գաւիթ սուրբ Եկեղեցւոյ քո՝ կալով առաջի Աստուածընկալ սուրբ Սեղանոյս՝ տկար անձամբ և մեղաւոր հրթամբք եր-

Եւ ծեծէին զգլուխն նորա եղեգամբ
եւ թքանէին ընդ երեսս։

գեմք զերգս երեքսրբեան սրբասացու-
թեամբ, եւ աղաչեմք զառատաբաշխ գը-
թութիւնդ. ընկալ զպտուղ շրթանց եւ
զբանաւոր Պատարագս սրտից մերոց ի հա-
ճոյս քո ըստ վերնոցն արժանաւորութեան,
և թող մեզ զամենայն յանցանս մեր, ըզ-
կամայ և զակամայ, զգիտութեան և զան-
գիտութեան, զմտաց եւ զխորհրդոց, ըզ-
բանից և զգործոց, զհոգւոց և զմարմնոց,
եւ զամենայն մասանց անդամոց, որպէս
զի լիցի մեզ կարողութիւն արժանապէս
օրհնել զքեզ և գովել զանուն քո սուրբ։
Տո՛ւր մեզ, Տէր, մաքրութիւն մտաց,
զղջումն սրտից, ճշմարտութիւն շրթանց,
զարտասուս աչաց, ամբծութիւն հոգւոց,
և սրբութիւն մարմնոց։ Լցո՛ զմեզ ամե-
նայն առաքինութեամբ, պայծառ հաւա-
տով, աներկբայ յուսով և մաքուր սիրով։
Եւ զարդարեա՛ զմեզ խոհեմութեամբ, ող-
ջախոհութեամբ, արիութեամբ և արդա-
րութեամբ։ Զօրացո՛ զմեզ յաղթող լինիլ
ընդդէմ հնարից բանսարկուին, եւ զամե-
նայն նետս մուխս չարին չիջուցանել. ար-
դարութեամբ եւ աստուածպաշտութեամբ



Եհարց ցնա Պիղատոս եւ ասէ
Դո՞ւ ես թագաւորն Հրէից:

կալ մնալ յաշխարհի ըստ հաճոյից և ըստ կամաց քոց, և յետ աստի կենացս զանճառ բարիսն վայելել Տերամբ մերով. որում փառք և զօրութիւն յաւիտեանս. Ամէն։

Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ վասն իմ ի յանօրինաց արհամարհեցար և այպանեցար. չնորհեա՛ մեղաւորիս զի օգնութեամբ արքազանից քոյոց չարչարանաց զերծանիցիմ ի խայտառակութենէ սարսափելի հրապարակին։

ԸՆԹԵՌՆՈՒԼ ԶԳԻՐՍ ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆՍ ԵՒ ԶԱՌԱՔԵԼԱԿԱՆՍ

Նշանակէ զհարցաքննութիւն Հերովդէի եւ Պիղատոսի։

ԱՂՕԹՔ

ՅԵՏ ՈՒՆԿՆԴՐՈՒԹԵԱՆ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՅՆ

Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ վասն իմ իբրև զպարտաւոր և մեղսագործ կացեր ի յատենի դատաւորացն մեծաւ խոնարհութեամբ, չնորհեա՛ մեղաւորիս, զի ի միւսանգամ քո գալստեանն զուարթերես մատչիցիմ առ դատաւորդ իմ երկնաւոր։

ԸՆԹԵՌՆՈՒԼ ԶՍՈՒՐԲ ԱՒԵՏԱՐԱՆՆ

Նշանակէ զպատասխանիս Տեառն մերոյ, զոր ետ Պիղատոսի։

ԱՂՕԹՔ

ՅԵՏ ՈՒՆԿՆԴՐՈՒԹԵԱՆ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՅՆ

Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ կալով առաջի Պիղատոսի՝ վկայեցեր ճշմարտութեան, չնորհեա՛ մեզ աւորիս, զի հաւատով և սիրով քո ամրացեալ՝ ոչ երկիցիմ ի յանօրինաց և ի յանհաւատից բռնաւորաց, այլ համարձակապէս խոստովանիմ զքեզ Աստուածդ իմ ճշմարիտ՝ մարմնացեալ, չարչարեալ և խաչեցեալ վասն փրկութեան իմոյ։

ԸՆԹԵՌՆՈՒԼՆ ԶՀԱՒԱՏԱՄՔՆ

Նշանակէ զուրացումն Պետրոսի առաքելոյն։

ԱՂՕԹՔ

ՅԵՏ ԶՈՅԳ ԱՍՈՒԹԵԱՆ «ՀԱՒԱՏԱՄՔ»ԻՆ

Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ ըստ աստուածայնոյ քում՛ տրամադրութեան՝ թոյլ

ետուր Պետրոսի զքեզ մարդկապէս ուրանալ. չնորհեա՛ մեղաւորիս, զի զքեզ միշտ ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սրբոյ՝ մի Աստուած ճշմարիտ խոստովանիցիմ, եւ հաւատայցեմ եւ դաւանիցեմ։

ԴԱՌՆԱԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԱՌ ԺՈՂՈՎՈՒՐԴՍ ԱՍԵԼՈՎ «ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ»

Նշանակէ զդառնալն Տեառն մերոյ առ Պետրոս։

ԱՂՕԹՔ

Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ աստուածայնով քով զթութեամբդ դարձար և ակնարկեցեր առ Պետրոս՝ տալով նմա զղջումն և զյորդումն արտասուաց. չնորհեա՛ մեղաւորիս զճշմարիտ զղջումն սրտի, զի զտիւ և զգիշեր ողբալով զսխալանս իմ՝ ընդունիցիմ զներումն և զթողութիւն ամենայն մեղաց իմոց։

ԱՒՆՈՒԼՆ ՍԱՐԿԱՒԱԳԻՆ
Ի ԳԼԽՈՅ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԶՍԱՂԱՒԱՐՏՆ

Նշանակէ զմերկացուցանելն տեառն մերոյ ի զինւորաց։

ԱՂՕԹՔ

Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ վասն փրկութեան իմոյ զգեստս նախատանաց զգեցար, գանից և ապտակաց համբերեցեր. չնորհեա՛ մեղաւորիս, զի ի ձեռն ապաշխարութեան մերկանայցեմ յինէն զգեստս պղծութեան, և զգենուցում զչնորհդ քո երկնային և կապակցեցայց ընդ քեզ, զի դու ես վերականգնիչ իմ։

ԵՐԳԵԼՆ ԴՊՐԱՑ ԶՍՐԲԱՍԱՅՈՒԹԻՒՆՆ

Նշանակէ զկատակիլն տեառն մերոյ ի զինւորաց։

ԱՂՕԹՔ

Տէր մեր Յիսուս Քրիստոս, Որդի Աստուծոյ եւ Բան Հօր, որ ըստ անճառ բարերարութեան քո ոչ կամեցար անտես առ-



Զգեցուցին նմա Հղամիդ կարմիր եւ
ծիրանի եւ պսակ ի փշոց ի գլուխ
նորա եւ այպն արարեալ ասէին.
ողջ լեր արքայդ Հրէից.

նել զարարածս ձեռաց քոց, այլ մարդասիրապէս գթացար յազգս մարդկան. խոնարհեցար ի հայրական ծոցոյ Էդ՝ Աստուած, առեր զմարմին ի սուրբ Կուսէն Մարիամայ կամաւ Հօր և հաճութեամբ սուրբ Հոգւոյն, զամենայն զմարդկայինս յանձն առեր կրել բաց ի մեղաց և զաստուածային մարմինդ քո ետուր փրկանս փոխանակ բազմաց, ըստ կանխասացութեան անշուշտ հրամանի քո՝ խաչի և մահու համբերելով։ Հովիւդ քաջ, զանձն քո եդեր ի վերայ բանաւոր հօտի քո, ժողովել զցրուեալսն ի փարախ Կաթողիկէ սուրբ Եկեղեցւոյ քոյ, լինիլ մի հօտ և մի հովիւ։ Վասն որոյ՝ մեք ժողովուրդք և խաչն արօտի քո՝ երկրամած դիմօք խոնարհեալ և ի ծունկս անկեալ աղաչեմք զամբաւ մարդասիրութիւն քո. մի՛ թողուր զմեզ ի ձեռաց քոց, և մի՛ անտես առներ զամբիծ արեամբ քո փրկեալ հօտս. մի՛ տար զմեզ ի փորձ թշնամւոյն և հակառակորդին մերոյ. սրբեա՛ զմեզ ի մեղաց և մաքրեա զմեզ յամենայն անօրէնութեանց մերոց. լուա՛ զսիրտս մեր ի խղճէ չարեաց, և փրկեա զմեզ յանիրա-

ւութեանց. լոյս տուր, Տէր, աչաց մերոց, զի մի՛ երբեք ննջեսցուք ի մահ, եւ մի՛ լիցի տեղի պարծանաց թշնամւոյն, այլ խորտակեալ ջաղխեսցի գլուխ նորին զօրութեամբ ամենայաղթ Խաչի քո, և տըկարասցին զօրութիւնք մեքենայից նորա։ Եւ տուր մեզ անարգել և անբռնադատ վըճարել զկեանս մեր ամենայն արդարութեամբ՝ հետևելով լուսոյ շաւղաց և երկնաչու ճանապարհին. ի վայրի դալարւոջ բնակեցո՛ զմեզ և առ ջուրս հանգստեան սնո՛. զի տեսցէ թշնամին և ամաչեսցէ, զի քո եմք ստեղծեալք և քո եմք փրկեալք. դու ես օգնական և Փրկիչ մեր, զի բաց ի քէն զայլ ոք ոչ գիտեմք և զանուն քո, Տէր, կարդամք զօրհանապազ. մի՛ թողուր զժառանգութիւն քո ի ձեռաց քոց, այլ ամենազօր աջ քո՝ լիցի հովանի և պահապան ի վերայ պաշտօնէից քոց բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին և ամենայն սրբոց քոց, քեզ փառք յաւիտեանս. Ամէն։

Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ վասն իմ փշով պսակեցար, և եղեգամբ զանեցար ի



Ահա այրդ ցնեզ:

Հրէից. շնորհեա՛ մեղաւորիս, զի զօրութեամբ սրբազանից քոյոց չարչարանաց զերծանիցիմ ի փչոց մեղաց՝ և մերկանայցեմ զամենայն հանդերձս չարութեան, և լինիցիմ քեզ ճշմարիտ երկրպագու՝ մինչ ի վախճան կենաց իմոց։

ՇՐՋԱԲԵՐԵԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԶԸՆԾԱՅՍՆ

Նշանակէ զածիլն ցեառն մերոյ ի Պիղատոսէ արտաքս առ Հրէայս։

ԱՂՕԹՔ

Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ վասն փրկութեան իմոյ ածիս այսր և անդր իբրև զգառն անմեղ, և իբրև զորոջ առաջի կըտրիչի անմռունչ կաս. շնորհեա՛ մեղաւորիս՝ զի ամենայն վշտաց և տառապանաց կենցաղոյս ի փառս անուանդ քում սրբոյ առանց ձանձրանալոյ համբերիցեմ։



Ի խաչ հան զդա...

ԼՈՒԱՆԱԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԶՁԵՌՍՆ

Նշանակէ զլուանալն Պիղատոսի զձեռս իւր ի վկայութիւն անմեղութեան Տեառն մերոյ։

ԱՂՕԹՔ

Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ ի յանիրաւ դատաւորէն Պիղատոսէ լուացմամբ ձեռաց նորին՝ անմեղ, անպարտ գոլ վկայեցար. չնորհեա՛ մեզաւորիս զի զամենայն աւուրս կենաց իմոց ի մէջ զանազան փորձութեանց ալեաց ծովու աշխարհիս՝ անմեղութեամբ կենցաղավարիցեմ ի փառս քո։

ՈՂՋՈՅՆ ՏԱԼՆ ՄԻՄԵԱՆՑ ԱՍԵԼՈՎ ՈՂՋՈՒՆԱՏՈՒԻՆ

«Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»

ԵՒ ԱՍԵԼՆ ՈՂՋՈՒՆԸՆԿԱԼԻՆ

«Օրհնեալ է յայտնութիւն Քրիստոսի»

Նշանակէ զհաշտութիւն Պիղատոսի եւ Հերովդէի։

ԱՂՕԹՔ

Միջնորդ Աստուծոյ և մարդկան, Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ ամենաբարի եւ խաղաղարար միջնորդութեամբ քով հաշտեցուցեր զՀայր ընդ արարածս, և արարեր խաղաղութիւն երկնաւորաց և երկրաւորաց, հեռաւորաց եւ մերձաւորաց եւ զնոյն խաղաղութիւն շնորհեցեր Եկեղեցւոյ քո ասելով, զխաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ։ Եւ այժմ, Տէր, աղաչեմք զքեզ՝ զերկնաւոր եւ ըզհաշտարար խաղաղութիւն քո պարգեւեա՛ մեզ, զի խաղաղութեամբ և հանդարտութեամբ վարեսցուք զկեանս մեր առանց մեղաց և առանց գայթակղութեան, և սուրբ սրտիւ սիրել զմիմեանս որպէս դու զմեզ սիրեցեր. դնել զանձն ի վերայ ընկերին, որպէս դու եդեր. եւ լինել առ միմեանս գթածք, քաղցունք և բարերարք, որպէս դու արարեր. հնազանդութեամբ և խոնարհութեամբ ծառայել միմեանց, որպէս դու խոնարհեցար ի ծունկս քոյոց աշակերտացն. որով մարթասցուք լինիլ պատշաճապէս

անդամք և մարմին գլխոյդ մերոյ։ Եւ դու, Տէր, ասացեր՝ թէ ուր երկու և երեք ժողովեալ են յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա։ Վասն որոյ և մեք ժողովեալ յանուն քո ի գաւիթ սուրբ, կաթողիկէ և առաքելական Եկեղեցւոյ, և Աստուածային և սուրբ ողջունիւս եղեալ մի անձն և մի սիրտ, ըստ սրբոց Առաքելոցն։ Լո՛ւր աղաչանաց մերոց, մարդասէր Տէր, եւ բընակեա՛ ի սիրտ եւ յոգի ժողովելոցս յանուն քո։ Սրբեալ մաքրեա՛ եւ յարդարեա՛ զմեզ լինել տաճար և բնակարան ամենազօր շնորհաց քոց. հեռացո՛ ի մէնջ զամենայն խորամանկութիւն եւ զնենգութիւն թշնամւոյն, զի սուրբ սրտիւ եւ մաքուր մտօք, երկիւղիւ եւ արդարութեամբ զօրհանապազ փառաւորեսցուք զամենազօր անուն քո, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ քոյով կենարար չարչարանօքդ պատճառ եղեր հաշտութեան անիրաւաց դատաւորացն. շնորհեա՛ մեղաւորիս, զի ի բաց լքեալ զամենայն խռովութիւնս և զոխակալութիւնս

ընդդէմ ամենայն հաւատացելոց եղբարց իմոց, սիրով եւ խաղաղութեամբ կենցաղավարիցեմ։

ԱՍԵԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԶԵՐԵՔՍԲԵԱՆՆ

Նշանակէ զերիս սուտ վկայսն, որք վկայեցին անյարմարապէս։

ԱՂՕԹՔ

Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Տէ՛ր զօրութեանց, լի են երկինք և երկիր փառօք քո։ Սերովբէքն աղաղակեն հրաշալի եւ հոգեղէն բարբառով առաջի փառաց աթոռոյ Աստուածութեան քո. քանզի զարհուրեալ ի հիասքանչ և ի հրաշալի փառաց քոց, ոչ ունելով կարողութիւն արժանապէս փառաւորել զանհասանելի մեծութիւն քո։ Վասն որոյ անլռելի եւ անդադար օրհնաբանութեամբ փառաւորեն զմիասնական Աստուածութիւնդ, զպաշտելի եւ զհամագոյ Երրորդութիւնդ։ Արդ՝ եթէ հրեղէնքն եւ անիմանալիքն չեն բաւական քոյոյ ան-

քաւութեան, մեք հողանութեայքս և յերկիր կործանեալքս՝ զիա՞րդ կարասցուք բովանդակել բանիւ զանբաւելի զթութիւնդ առ արարածս, եւ մանաւանդ առ ազգս մարդկան։ Որ նախ ի սկզբանն արարչագործ ձեռամբդ ստեղծեր զնախնին մեր զԱդամ, պատուելով զնա քան զայլ արարածս՝ որ բանիւ միայն արարան, եւ յետ պատուիրազանցութեան պտղոյն ճաշակման ո՛չ արարեր անտես զանկեալ բնութիւնս, այլ ետուր զօրէնս եւ առաքեցեր զՄարգարէս՝ յայտնելով զօգուտն, իսկ պատերեալքն ի պատրողէն ոչ ծանեան զխորհուրդ բարերար կամաց քոց։ Ապա Հայրդ երկնաւոր կամելով յայտ առնել զանճառական սէրդ կապակցութեամբ Հոգւոյդ Սրբոյ, առաքեցեր զմիածին եւ զծոցածին Բանդ, որ եկեալ մարմնացաւ ի սուրբ Կուսէն, եւ նովին մարմնովն համբերեաց չարչարանաց, խաչի եւ մահու, եւ եղեւ քաւութիւն մեղաց մերոց։ Վասն որոյ մեք ընդ Սերովբէիցն երգեմք նմա ասելով՝ Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր զօրութեանց, լի են երկինք եւ երկիր փառօք քո՝ օրհնութիւն ի բար-

ձունս. օրհնեալ ՝է գալուստ քո յաշխարհս ի փրկութիւն մեր Քրիստոս Աստուած մեր. օրհնեալ է կենսաբեր տնօրէնութիւն քո. օրհնեալ է փրկաւէտ չարչարանք քո՝ որով զերծաք ի չարչարանաց եւ յանչարչարութիւն վիճակեցաք։ Օրհնեալ է կենդանարար մահն քո, որով փրկեցաք ի դառն մահուանէ, եւ յանմահութիւն երկնից վերափոխեցաք. որ յաւէրժական գոհաբանութեամբ մատուսցուք փառս և երկրպագութիւն բարերարիդ՝ փրկչիդ եւ նորոգողիդ, յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

ԿՈՉԵԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ

«Առէք կերէք»

Նշանակէ զբանն Պիղատոսի որ ասաց Հրէից, առէք զսա դուք՝ եւ ըստ ձերոց օրինացն դատեցէ՛ք։

ԱՂՕԹՔ

Օրհնեալ է պարգեւատուն կենաց, եւ պարգեւն անմահութեան՝ Քրիստոս Աստուած մեր։

ԱՂՕԹՔ

ՅԵՏ ԱՍԵԼՈՅ

«Արքեմ ի սմանեմ»

Օրհնեա՛լ է շնորհն ձրի, եւ պարգեւն անծախելի, կենդանի և կենդանարար Մարմին եւ Արիւն Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

ԱՂՕԹՔ

ՅԵՏ ՀԱՅՐ ԵՐԿՆԱՒՈՐԻՆ

ՀԱ՛ՅՐ ԵՐԿՆԱՒՈՐ, բարերար եւ բազումողորմ Աստուած, տուող բարեաց եւ պարգեւիչ կենդանութեան, որ ամենաբարի բնութեամբդ՝ յաղթեցար ի մարդասիրութենէ, մինչ զի զհամագոյակից և զարքարչակից, զաթոռակից եւ զհաւասարակից Բանդ՝ առաքեցեր յաշխարհ, առ ի մարմնանալ ի սուրբ Կուսէն՝ եւ նովին անմեղ եւ անպարտական մարմնովն՝ եղև գին եւ փրկանք ամենայն աշխարհի. զի ետուր զնա ի զենումն, ի մահ եւ ի փրկութիւն վասն ամենայն հաւատացելոց անուան քո

մեծի։ Եւ այժմ աղաչեմք զքեզ, միջնորդութեամբ Մարմնոյ և Արեան Միածնի քո հայեա՛ց ի հեղումն սուրբ Արեան նորա, և յանշնչութիւն նորա ի խաչին ի բացումն փրկական աղբերաց նորա, և արեամբ թաթաւումն սուրբ մարմնոյ նորա, եւ անցո՛ ի մէնջ զցասումն պատուհասի յանցանաց մերոց բարերարութեամբ քով, զի նորա եմք փրկեալ. խնայեա՛ ի գինս սուրբ Արեան Միածնի քո, եւ ողորմեա՛ բանաւոր հօտի քոյ՝ յուսացելոցս յանուն քո։



ԱՌՆՈՒԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ
ԶԸՆԾԱՅՍ Ի ՁԵՌՍՆ

Նշանակէ զգանիլն եւ զծաղիլն տեառն մերոյ ի Պիղատոսէ եւ ի զինուորաց նորին։

ԱՂՕԹՔ
ՅԵՏ ՅԱՄԵՆԱՅՆԻ

Արժանապէս օրհնեմք զքեզ, եւ արդարապէս գովեմք և գոհանամք զքէն Տէր Աստուած մեր, որ ըստ բազում ողորմութեան քում անտես արարեր զանարժան գործս մեր, եւ այսմ չնորհի արժանաւորս կացուցեր, վասն միջնորդութեան Մարմնոյ և Արեան Միածնի քո. հաղորդս արա՛ փառաց Աստուածութեանդ քո, միաւորելով ընդ գերապատիւ ճոխութեանդ քո։ Վասն որոյ՝ յամենայնի օրհնեմք, եւ ըստ ամենայնի գոհանամք զքէն զօրհնապաղ, Տէր Աստուած մեր. ողորմեա՛ մեզ։



Եւ թքեալ ի նա....
ծեծէին զգլուխ նորա:

ԽԱՉԱԿՆՔԵԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ
Ի ՎԵՐԱՅ ՄԱՐՄՆՈՅ ԵՒ ԱՐԵԱՆ

Նշանակէ զբեւեռելն փրկչին ի գինւորաց ի վերայ Սրբոյ Խաչին։

ԱՂՕԹՔ

Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ վասն փրկութեան իմոյ տարածեցեր զբազուկս քոյ արարչագործս, եւ ի վերայ Խաչափայտին բեւեռեցար չնորհեա՛ մեղաւորիս, զի զթախծեալ սիրաս իմ սիրով ընդ քեզ բեւեռիցեմ, եւ մի՛ երբեք ի քէն մեկուսացեալ հեռանայցեմ։

ԱՂՕԹՔ
ՅԵՏ ՈՐԴԻ ԱՍՏՈՒԾՈՅ

Հաց կենաց եւ բաժակ անմահութեան, միածին Որդի Աստուծոյ, Տէր մեր և ՓՐԿԻՉ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ՝ Աստուած ճշմարիտ, մանանայդ երկնային իջեալ ի վերուստ, եղեր կերակուր ամենայն հաւա-

Զձեռս եւ զոտս իմ ծակեցին, ըստ յայտնապէս
Դաւթեան ձայնին, զփայտ խաչին բեւեռեցին:

տացելոց քոց. հեղմամբ Արեան քոյ ողորմեա՛ բանաւոր հօտի քո, շնորհելով զթողութիւն յանցանաց հաւատացելոց. ի մահու լեր փրկութիւն հաւատացելոց, և արժանապէս ճաշակողաց զՄարմին և զԱրիւն քո սուրբ։ Ցիշեա՛ զփրկաւէտ չարչարանսն քո եւ զկենսատու մահն, զարեամբ ճապաղումն ի Խաչին և զանտանելի կիրսն, զոր ընկալար ի մարմնիդ վասն մեր։ Նայեա՛ց ի խոցուածս արարչագործ ձեռաց եւ ոտից քոց, եւ ի բացումն կենարար վտակին՝ որով նորոգեցան տիեզերք եւ արքեցան արարածք։ Նովին վտակօքն լուա՛ եւ մաքրեա՛ զմեզ յամենայն մեղաց մերոց, եւ թող մեզ զամենայն յանցանս մեր։ Խնայեա՛ Արեամբ քո փրկեալ հօտի, եւ այց արա մեզ ի միւս անգամ գալստեան արքայութեան քում. զի մահուամբ եւ չարչարանօք փրկեցեր, Քրիստոս Աստուած մեր, բարերար եւ նորոգող. եւ քեզ փառք եւ երկրպագութիւն յաւիտեանս յաւիտենից. Ամէն։



Խաչին վերայ բազկատարած երկնագէտ,
Գլուխն համակ արիւնամած փըշաւէտ.
Ո՛հ, դա՛ անոյշ Փրկիչն է իմ՝ իմ հոգւոյս,
Դա՛ արարիչ, դա՛ կեանք անմահ իմ Յիսուս։

ԱՂՕԹՔ

ՅԵՏ ՀՈԳԻ ԱՍՏՈՒԾՈՅ

ՀՈԳԻ ԱՍՏՈՒԾՈՅ՝ Աստուած ճշմարիտ, որ նախ ի սկզբանն շրջէիր ի վերայ ջուրց, եւ ստեղծանէիր զարարածս յոչընչէ, եւ պէսպէս հրաշսն գործեցեր յաւուրս Մարգարէիցն. եւ ի ժամանակի տնօրէնութեան Էակցին քո՝ իջեր ի Յորդանան եւ ի Վերնատունն, լցեր զԱռաքեալսն բազմապատիկ շնորհօք։ Եւ այժմ աղաչեմք զքեզ, միջնորդութեամբ սուրբ Մարմնոյ եւ Արեան փառակցին քո՝ որ բազմեալ կայ ի վերայ սրբոյ Սեղանոյս, է՛ջ ի սիրտս եւ յոգիս մեր, եւ մաքրեա՛ զմեզ իբրեւ զԱռաքեալսն ի սուրբ Վերնատանն, եւ բորբոքեա՛ ի մեզ զկայծ սիրոյ աստուածութեանդ, զի արժանապէս լիցուք տաճար եւ բնակարան քեզ եւ Էակից Փառակցացդ. եւ ամենազօր շնորհիւ քո՝ լիցուք փրկեալք յաւուր նորոգման մերոյ, եւ քեզ նորոգողիդ Աստուծոյ՝ վայելէ փառք յաւիտեանս. Ամէն։



Ի մէջ երկուց անօրինաց
Կայր մերկացեալ տուողն օրինաց:

ԿԱԼՆ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ ՅԱՋՄԷ ԵՒ ՅԱՀԵԿԷ

Նշանակէ զերկուս աւազակս խաչեցեալս յաջմէ եւ յահեկէ Տեառն մերոյ։

ԱՂՕԹՔ

Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ վասն փրկութեան իմոյ ընդ անօրէնս համարեցար, եւ երջանիկ աւազակին զարքայութիւն քո՝ խոստացար. չնորհեա՛ մեզ աւուրիս զի յելանելն հոգւոյս ի մարմնոյս, արժանի լինիցիմ լսել զձայն քո Աստուածային երանաւէտ։

ԱՍԵԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ

«Ընդ որս եւ մեզ»

Նշանակէ զդաւանումն աւազակին, եւ ասելն յիշեա՛ զիս, Տէր, յարքայութեան քում։

ԱՂՕԹՔ

Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ բացեր զաչս մտաց աւազակին, զի զքեզ Տէր եւ

Աստուած իւր գոլ հաւատայր. շնորհեա՛ մեղաւորիս զբացումն աչաց սրտի իմոյ, զի զքեզ ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ գոլ մի Աստուած հաւատայցեմ. և արքայութեանդ քում սրբոյ արժանի գտանիցիմ, եւ ընդ Եկեղեցւոյն խրախուսելով՝ քեզ փառս եւ երկրպագութիւնս վերառաքիցեմ։

ԱՂՕԹՔ

Ի ԺԱՄՈՒ ԱՌԱՔԵԼՈՅԻՆ

Ցիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛, եւ օրհնեա՛ զուխտ եւ զժառանգութիւն Եկեղեցւոյ քում սրբոյ, եւ շնորհեա՛ մեզ զերկնային քո զխաղաղութիւն, զի մի՛ լիցի ի մեզ տեղի եւ մուտ չարին. հեռացո՛ ի մէնջ զամենայն խարդախութիւն թշնամւոյն, եւ զբռնութիւն նորա խորտակեա՛ բարեխօսութեամբ եւ յիշատակաւ սրբուհւոյ Աստուածածնին, եւ սրբոյն Յովհաննու Կարապետին, եւ սրբոյն Ստեփաննոսի նախավկային, սրբոյն Գրիգորի մերոյ Լուսա-

ւորչին, եւ սրբոց Առաքելոց, Մարգարէից, եւ սրբոց Հայրապետաց, Մարտիրոսաց, Ճգնաւորաց, Կուսանաց, եւ ամենայն սրբոց քոց՝ երկնաւորաց եւ երկրաւորաց, որոց յիշատակն եւս օրհնութեամբ եղիցի ի մէջ սուրբ եկեղեցւոյս եւ առաջի սուրբ Պատարագիս. Ամէն։

Յիշեա՛, Տէր, զպաշտօնեայս քո՝ զծնողսն մեր՝ զվարդապետս, զեղբարս, զընկերս, զկերակրիչս, զուխտաւորս, զճանապարհորդս, զհանգուցիչս, զվաստակաւորս, զխոստովանողս, զապաշխարողս, զգերիս, զհիւանդս, զնեղեալս, զիշխանս, զչարարարս, զբարերարս, զթշնամիս, զատելիս, եւ որք պատուիրեցին մեզ հաւատով. Յիշեա՛, Տէր, և ողորմեա։

ԱՂՕԹՔ

ՅԵՏ ԳՈՀՈՒԹԵԱՆ

Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա, եւ զթա՛ ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց, որք ուղիղ դաւանութեամբ պաշտեցին զքեզ,

եւ նովին հաւատով եւ յուսով ննջեցին ի քեզ։ Ցիշեա՛ զնոսա յաւուր մեծի գալստեան արքայութեան քո, արա՛ արժանի ողորմութեան, քաւութեան եւ թողութեան մեղաց. դասաւորեալ պայծառացո ընդ սուրբս քո յաջակողմեան դասուն, զի յաւէրժական խնդութեամբ եւ մշտնջենական ցնծութեամբ փառաւորեսցեն զքեզ, Քրիստոս, ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

ԵՐԳԵԼՆ ԴՊՐԱՑ ԶՀԱՅՐ ՄԵՐ

Նշանակէ զեօթն բանս, զոր ասաց Փրկիչն մեր ի վերայ Խաչին։

ԱՂՕԹՔ

ՑԵՏ ԶՈՅԳ ԱՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՐ ՄԵՐԻՆ

Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ ի վերայ Խաչին վասն փրկութեան իմոյ ծարաւեցար, եւ խաչահանուաց քոց աղօթեցեր. չնորհեա՛ մեղաւորիս զի փրկարար քոյով նպաստութեամբդ դառնայցեմ ի յախտից մեղաց իմոց, և ներելով իմոց պարտապանաց՝ քեզ ճշմարիտ հովուիդ իմում հետևիցիմ։

ԲԱՐՁՐԱՑՈՒՑԱՆԵԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԶԸՆԾԱՅՍՆ ԱՍԵԼՈՎ

«Ի Սրբութիւն Սրբոց»

Նշանակէ զաւանդումն հոգւոյն Տեառն մերոյ ի ձեռս հօր Աստուծոյ ի վերայ Խաչին։

ԱՂՕԹՔ

Զերեւեալդ ինձ ի փրկութիւն՝ խոստովանիմ ճշմարտապէս Մարմին եւ Արիւն Քրիստոսի Աստուծոյ՝ յուսոյ իմոյ, եւ աղաղակեմ առ քեզ՝ մեղայ յերկինս եւ առաջի քո. սրբեա զիս յամենայն պղծութենէ հոգւոյ եւ մարմնոյ. շնորհեա՛ ինձ ժամանակ եւ ցանկութիւն ապաշխարութեան. փրկեա զիս յերեւելի եւ յաներեւոյթ թշնամւոյ. տպաւորեա՛ զօգուտն հոգւոյ եւ մարմնոյ իմոյ։ Պարգեւեա՛ ինձ բարեգործութեամբ եւ բարեպաշտութեամբ զքեզ արժանապէս ճաշակել, եւ փառաւորել զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

ԹԱՆԱԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԶՊԱՏՈՒԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ Ի ՅԱՆԱՊԱԿԱՆ ԱՐԵԱՆ

Նշանակէ զներկիլն Արեամբ Փրկչին մերոյ։

ԱՂՕԹՔ

Տէ՛ր իմ Յիսուս Քրիստոս, որ ըստ նախագուշակութեանն Եսայեայ Մարգարէին՝ հնձան հարեր՝ եւ զհանդերձ մարմնոյ քո ներկեալ արեամբ քով թաթաւեցեր. շնորհեա՛ մեղաւորիս, զի ճաշակմամբ նոցին մաքրիցիմ յամենայն աղտեղութեանց հոգեկանաց, եւ իսկութեամբ սիրոյ ընդ քեզ՝ մինչեւ ցկէտ կոչման իմոյ կապակցիցիմ հաստատապէս։

ՈՂԲԵՐԳԱԿԱՆՔ

ՎԱՍՆ ՀԱՄԱՅՆ ԱԶԳԻ ԵՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆԱՅ ՀԱՅՈՅ

Եւ արդ Տէր իմ եւ Աստուած իմ Յիսուս Քրիստոս, ես ամենասխալ եւ բազում չարեօք եւ անօրէնութեամբ լցեալ ծառայս քո, արդէն յերկիր խոնարհեալ՝ կորագլուխ անձամբ եւ մեծակական ողբով ի խորոց սրտէ հառաչեմ առ ամենազթած Աստուածդ իմ, եւ աղաչեմ վասն ողորմելի եւ անտերունչ ազգիս մերոյ. աղաղակեմ առ քեզ՝ ո՛վ ողորմելեաց Ողորմած, անտիրացելոց Տէր, անճարելոց Ճար, անօգնականից Օգնական, անյուսից Յոյս եւ Ապաւէն, նեղելոց եւ վշտացելոց հանգիստ եւ մխիթարութիւն։ Գոչեմ առ քեզ մեծաւ թախանձանօք. բա՛ց, Տէր, զաչս քո, եւ տե՛ս զողորմելիութիւն մեր. տե՛ս զփոքրիկ հօտս քո, թէ ո՞րպէս եմք ցրուեալ եւ տարագրեցեալ ընդ ամենայն երկիր եւ մատնեալ ի ձեռս օտարաց տերանց եւ թշնամեաց, զրկեալ ի սեպհական բնակութեանց եւ ի հայրենեաց մերոց։

Զգթութիւն ետ, Տէ՛ր, առաքեա
ի վերայ մեր եւ ամենայն
ժողովրդեանս:

Ո՛հ, զի եմք որպէս զնաւ ղեկաբեկ, տատանեալք յալիս ծովու առանց ղեկաւարի, եւ որպէս ոչխարք մոլորեալք ի յանապատի առանց հովուի. եւ ո՛չ ունիմք զՄովսէս՝ որ առաջնորդեսցէ. եւ ո՛չ ունիմք զՅեսու՝ որ ընդդէմ թշնամեաց կացցէ. եւ ո՛չ ունիմք զԴաւիթ՝ որ վասն մեր հաճոյական պատարագս մատուսցէ քեզ, եւ զսուր բարկութեան քո յետս դարձուսցէ։ Եւ ո՛չ ունիմք զՄարգարէ, զԹագաւոր եւ զԱռաջնորդ, եւ ոչ զօգնութիւն իմն յումեքէ։

Իշխանք մեր եւ ազատազնեայք մերկացեալք յիշխանութեանց եւ յընչից՝ եւ անկեալք ընդ իշխանութեամբ այլոց ծառայեն թշուառութեամբ։

Հասարակ ժողովուրդքս գրաւեալք ի ներքոյ ծանր լծոյ եւ հարկի այլազանց՝ հազիւ թէ հայթայթանօք գտանեմք զապրուստս կենաց մերոց. և զսերմանեալսն եւ զվաստակս մեր այլք ուտեն եւ վայելեն։

Եկեղեցիք վայելչագեղք եւ վանօրայք պայծառաշէնք՝ որք յանուն քո եւ ի յի-

շատակ սրբոց քոց սիրելեաց կառուցան, Հոգւոյդ Սրբոյ օծմամբն կնքեցան, եւ ամենայաղթ Խաչիդ նշանաւն պսակեցան, յորս մատչիւր պատարագ Գառնդ Աստուծոյ ի փրկութիւն աշխարհի, յորս կատարէին սրբագործ եւ հոգեկեցոյց խորհուրդք քո, յորոց ելանէին եւ վերառաքէին առ քեզ ձայնք օրհնութեանց և փառաբանութեանց, բուրմունք հոգեւորականք, նուէրք հաճոյականք եւ աղօթք հաշտարարք, ահա՛ ըստ մեծի մասին ամայացեալք և ապականեալք՝ գողոց եւ գազանաց օթարան են եղեալք։

Յիրաւի ձգեաց թշնամին զձեռն ի ցանկալիսն քոյ։ Մտին հեթանոսք ի ժառանգութիւնս քոյ եւ պղծեցին զսուրբ տաճարս քո։ Սրահք եւ սրբութիւնք նոցա դարձան յապականութիւն։ Սուգ առին ճանապարհք նոցա։ Հատան երթևեկք տօնից տարեկանաց նոցա։ Լռեցին ի նոցանէ ձայնք օրհնութեանց եւ փառաբանութեանց։ Գազանք եւ յափշտակողք մուտ եւ ել առնեն ի նոսա։ Սքանչելարար դամբարանք եւ բժշկարար նշխարք սրբոց՝ որք ի նոսա, կոխան եղեն ոտից անսրբոց եւ պղծոց։ Քահանայք եւ

պաշտօնեայք նոցա հալածեալք։ Ուստի եղաք մեք մնացողքս նախատինք դրացեաց եւ այպն կատականաց թշնամեաց մերոց։

Արդ՝ այս ամենայն եկին եւ գան ի վերայ մեր վասն մեղաց մերոց։ Քանզի մեք մեղաք, անօրինեցաք եւ ապստամբեցաք ի քէն. վասն այսորիկ եւ դու թոյլ ետուր այս ամենայն չարեաց գալ ի վերայ մեր եւ տիրել մեզ, եւ մատնել զմեզ ի ձեռս թշնամեաց՝ տերանց ապստամբողաց. որպէս ահա եմք տառապեալք ի վերայ ամենայն երկրի այսօր վասն մեղաց մերոց։ Ուրեմն Աստուծոյդ մերում արդարութիւն, եւ ամօթ երեսաց մերոց։

Արդ՝ այժմ առ ո՛վ դիմեսցուք, ո՛վ Աստուած մեր, եւ ո՞ւմ պատմեսցուք զցաւս մեր. եթէ ոչ քեզ բարկացելոյդ. որ որպէս արդարութեամբ խրատեցեր եւ հարեր զմեզ, կարող ես և դու ողորմութեամբդ անդրէն վերստին բժշկել եւ միխիթարել։

Վասն որոյ՝ ահա անկանիմ առաջի անոխակալիդ Աստուծոյ եւ ըստ անառակին գոչեմ. մեղաք յերկինս եւ առաջի քոյ.

մեղաք ստեղծողիդ մերոյ. մեղաք բարե-
բարիդ մերոյ եւ Աստուծոյ։

Աղաչեմ զքեզ, անոխակալ Տէր Աստ-
ուած, դարձիր ի բարկութենէ քումմէ եւ
անցո՛ ի մէնջ զցասումն քո. մի՛ յիշեր
զմեղս մեր զառաջինս, վաղվաղեսցէ առ
մեզ ողորմութիւն քո, զի աղքատացաք
յոյժ։ Զարթի՛ր, Տէր, զարթի՛ր. արի՛ եւ
մի՛ մերժեր զմեզ խսպառ։ Մի՛ մոռանար
զաղքատութիւն եւ զնեղութիւնս մեր։
Արի, Տէր, օգնեա՛ մեզ եւ փրկեա զմեզ
վասն անուան քոյ, որ կոչեցեալ է ի վերայ
մեր։ Մի՛ մատներ զմեզ խսպառ վասն ան-
ուան քոյ. մի՛ ցրեր զուխտս քո. եւ մի
ի բացեայ առներ զողորմութիւնս քոյ ի
մէնջ։ Զի դու միայն ես Տէր մեր եւ թա-
գաւոր. դու միայն ես Փրկիչ մեր եւ օգ-
նական. դու միայն ես ապաւէն մեր եւ
յոյս։ Զի բաց ի քէն զայլ ոք ո՛չ գիտեմք,
եւ զանուն քո կարդամք հանապազ։ Տե՛ս
զտառապանս ազգիս մերոյ. հաս յօգնու-
թիւն եւ այց արա։

Եւ որպէս գթայիր հնոյ ժողովրդեանն՝
վասն Աբրահամու, Իսահակայ, Յակովբայ

եւ վասն Դաւթի ծառայից քոց. զթա՛ եւ այժմ նորոյ ժողովրդեանդ եւ փոքու հօտիդ, վասն սրբուհւոյ Աստուածածնի՝ անարատ ծնողի քոյ, սրբոյն Յովհաննու Կարապետին եւ Մկրտչին քոյ. սրբոյն Ստեփաննոսի նախավկային քոյ. սրբոց Առաքելոցն եւ Մարգարէից քոց. եւ սրբոց Առաքելոցն եւ յատուկ Լուսաւորչացն մերոց՝ Թադէոսի եւ Բարդուղիմէոսի, եւ սրբոյն Գրիգորի բազմաչարչար վկային քոյ. եւ նորին Որդւոց եւ Թոռանց՝ ընտրելոց ծառայից քոց. եւ սրբոց Հռիփսիմեանց եւ Գայիանեանց՝ յաղթող վկայիցն քոց։ Եւ բարեխօսութեամբ սրբոց Հայրապետաց եւ Վարդապետաց, Ճգնաւորաց, Մարտիրոսաց, Կուսանաց, եւ ամենայն սրբոց քոց հնոց եւ նորոց՝ յայտից եւ անյայտից։

Այլ եւ բարեխօսութեամբ սրբոց քոց երկնաւորացդ՝ Գաբրիէլի եւ Միքայէլի եւ ամենայն անմարմնական դասուցդ։

Զի եթէ վասն բազում մեղաց մերոց եւ անօրէնութեանց առ ժամանակ մի թողեր զմեզ, դարձուցեր զերեսս քո ի մէնջ եւ տրտմեցուցեր, վասն պատուական Ար-

եան քո՝ եւ վասն արդարութեան սիրելեաց քոց՝ դարձ առ մեզ. եւ ողորմութեամբ քով մեծաւ ողորմեաց մեզ. եւ ուրախաց զմեզ՝ որպէս ասացեր առ Եսայեաւ, Լսեցո՛ եւ մեզ զայն երանաւէտ ձայնն թէ՝ — Լուսաւորեաց Եկեղեցիդ Հայաստանեայց եւ ուրախ լեր, զի հասեալ է լոյս քո։ Ահաւասիկ ես դարձուցանեմ ի քեզ զխաղաղութիւն իբրեւ զգետ. եւ զմանկունս քո ի հեռաստանէ ի վերայ ուսոց իւրեանց բարձեալ բերիցեն — ։ Ցիրաւի՝ այդպիսի ամենակարող Աստուծոյ ողորմութեան եմք մնացեալ ապաստան, ողորմած Աստուած։

Ուրեմն հաչտեա՛ց ընդ մնացորդաց ժողովրդեան քոյ. փրկեա՛ զմեզ մեծաւ սքանչելեօք. ժողովեա՛ զմեզ ի գոգ սիրոյդ եւ մխիթարեա՛ ի փառս անուան քոյ սրբոյ, որ կոչեցեալ է ի վերայ մեր։

Այլ և աղաչեմ զքեզ, Տէր իմ և Աստուած իմ, վասն ամայացելոց և անշքացելոց վանօրէից և եկեղեցեաց մերոց։ Լուր մեզ՝ ահա նեղեալ անձամբք աղաղակեմք։

Մի՛ յիշեր զմեղս մեր, որով բարկա-

ցուցաք զքեզ. այլ յիշեա զսուրբսն քո՝ յորոց անուն կառուցան եկեղեցիք մեր։ Զսուրբ և զմաքուր նշխարս նոցա, որք ամփոփեալք են ի նոսա. և զսրբութիւնսն՝ յորոց վերայ անուն քո կոչեցեալ է։

Եւ ոչ եթէ վասն արդարութեան իմոյ արկանեմ զայս աղերս առաջի քո, այլ վասն բազում գթութեան քոյ եւ վասն սիրոյ սիրելեաց սրբոց և սրբութեանց քոց։

Ուրեմն աղաչեմ զքեզ, ողորմած եւ գթած Աստուած, վասն անհուն ողորմութեան քոյ, ի սէր սրբոց Եկեղեցեաց եւ սրբութեանց քոց, բարեխօսութեամբ քեզ հաճոյացելոց սրբոցն քոց, եւ միջնորդութեամբ նոցին չարչարանացն, պատուական արեանն, և մաքուր նշխարաց և դամբարանացն՝ ողորմեա՛ և այց արա։ Որպէս տառապեցուցեր բարկութեամբդ, նմանապէս բժշկեա՛ եւ մխիթարեա՛ ողորմութեամբդ։ Զի որպէս տեսին աչք մեր զամայութիւն և զապականութիւն նոցին վասն մեղաց մերոց, տո՛ւր մեզ տեսանել վերըստին զվերանորոգութիւն և զպայծառութիւն նոցին վասն սիրելեաց սրբոց քոց։

Եւ որպէս հատան եւ լռեցին ձայնք օրհնութեանց եւ փառաբանութեանցն ի նոցանէ, արա զի վերստին զօրացին եւ բարձրացին ի փառս անուան քոյ. զի ծանիցեն ամենեքեան թէ՝ կոչեցեալ է անուն քոյ ի վերայ մեր եւ նոցա։ Զորս և մեր տեսանելով վերառաքեսցուք փառս և գոհութիւնս ի յերկինս քեզ ընդ Հօր և ընդ Սրբոյ Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։



Եւ բնդ քո անձն անցցէ սուր։

ԴԱՌՆԱԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԱՌ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ԸՆԾԱՅԻՒ ԱՍԵԼՈՎ «Ի ՍՈՒՐԲ Ի ՍՈՒՐԲ»

Նշանակէ զհանգչիլն Բանին Աստուծոյ ի գիրկս Մօր իւրոյ յետ իջանելոյն ի Խաչէն։

ԱՂՕԹՔ

ԵՐԿՐՊԱԳՈՒԹԵԱՄԲ

Խոստովանիմ եւ հաւատամ, զի դա՛ է ճշմարիտ Մարմին եւ Արիւն Յիսուսի Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի։

ԱՂՕԹՔ

Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ յիջանելն քո ի Խաչէն՝ հանգեար ի գիրկս Մարիամու՝ անարատի Մօր քո, եւ ցողով կուսական արտասուաց նորին ոռոգանիլ հաճեցար։ Հնորհեա՛ մեզ աւուրիս զի զսիրտ իմ մեղսամած՝ քեզ կենսատուիդ իմում օթեւան եւ առագաստ պատրաստեցից, եւ անդադար զխոցուածս մարմնոյդ ողբալով համբուրեցից։

ԱՐԿԱՆԵԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԶՄԻ ՄԱՍՆ ԿԵՆԱՐԱՐ ՄԱՐՄՆՈՅՆ Ի ԲԱԺԱԿՆ

Նշանակէ զիջումն Հոգւոյն Տեառն մերոյ ի դժոխս առ նախահարս։

ԱՂՕԹՔ

Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ ըստ անճառելի ողորմութեան քում իջեր ի դժոխս միաւորեալ Աստուածութեամբդ առ ի սփոփել եւ վերածել զնախահարս. շնորհեա՛ մեզաւորիս, զի ի մէջ դժոխոց մեղաց իմոց արժանի լինիցիմ այցելութեանդ, և օգնութեամբ քով յառնիցեմ ի մեռելոտի գործոց իմոց. Ամէն։



Պատեաց զնա պաստառակալաւ
եւ եդ ի կռածոյ գերեզմանի:

ՃԱՇԱԿԵԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԶՍՐԲԱՐԱՐ ՄԱՐՄԻՆ ԵՒ ԶԱՐԻՒՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

Նշանակէ զթաղումն Տեառն մերոյ երեքօրեայ ի գերեզմանի։

ԱՂՕԹՔ

Երբ ասի «Քրիստոս պատարագեալ»

Միածին Որդի Աստուծոյ եւ Բան Հօր, արարիչ երկնաւորաց եւ երկրաւորաց եւ լցուցիչ համայն արարածոց, որ լնուս զամենայն յամենայնի, անպարագրելի գոլով բնութեամբ՝ բովանդակեցար ի մարմնի, զի տեսանելի եւ շօշափելի լիցիս մարդկային ազգի, վասն որոյ ճաշակելի եւ կերակուր եղեր ամենայն հաւատացելոց, զի տացես զկեանս յաւիտենականս այնոցիկ՝ որք հաւատով եւ սրբութեամբ մերձենան ի քեզ՝ ըստ անսուտ խոստման քո, մարդասէր։ Եւ այժմ մեք փրկեալքս պատուական արեամբ քո՝ հաւատով տեսանեմք զփրկիչդ մեր բոլորապէս պարունակեալ ի ներքոյ կրկին տեսակաց՝ հացին եւ գինւոյն, հոգւով, մարմնով եւ Աստուածութեամբ. յաղագս

որոյ երկրպագութիւն մատուցանեմք փրկողիդ մերում, եւ աղաչեմք զանբաւ գթութիւն քո։ Լո՛յծ զկապ մեղաց մերոց, եւ ջնջեա՛ զձեռագիր մերոյ անօրէնութեան, բեւեռեա զմեզ յերկիւղ եւ ի սէր քո սուրբ, զի միշտ գնասցուք արժանի կոչմանն՝ յոր կոչեցեր զմեզ։ Տուր մեզ, Տէր, բանաւոր հօտի քո յամենայն սրտէ հետեւել միայն զկնի ճշմարիտ հովուիդ եւ կատարել զկամս քո, եւ լսել զերանաւէտ բարբառ քո. աճել օր ըստ օրէ, և պահել զպատուիրանս քո զօրհանապազ։ Պարգեւեա՛ մեզ զսիրտ սուրբ եւ զհոգի խոնարհ, զի մի՛ արհամարհեալ լիցուք առաջի քո. մաքրեա՛ զմիտս եւ զխորհուրդս մեր, որպէս սրբոց քոց Առաքելոցն, զի ընդ նոսին արժանի լիցուք զսուրբ եւ զսրբարար, զկենդանի եւ զկենդանարար Մարմին եւ Արիւն քո՝ Քրիստոս Աստուած մեր, ճաշակել եւ ընդունիլ յուսով կենացն յաւիտենից ընդ ամենայն սուրբս քո, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

ԱՂԵՐՍԱՆՔ

ՎԱՍՆ ԽԱՉԻ ԵՒ ՉԱՐՉԱՐԱՆԱՑ ՓՐԿՉԻՆ

ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅ — ԲԱՆ Ղ.

Բարեբանեալ Աստուա՛ծ երկնաւոր, միա՛յն արարիչ, Տէ՛ր ամենակալ, մեծութի՛ւն անեղ, գթութի՛ւն օրհնաբանելի ողորմութի՛ւն խոստովանելի, բարերարութի՛ւն երկրպագելի, խնամակալութի՛ւն պաշտելի, մարդասիրութի՛ւն տօնելի, պահպանութի՛ւն խնկելի, բարձրեա՛լ անքնին, մերձաւո՛ր կամարար. ապաւէ՛ն անկասկածելի, մխիթա՛ր սրտից, փարատի՛չ վշտաց, ապաքինի՛չ ցաւոց, սպառո՛ւմն վհատութեանց, բարձո՛ւմն պարտեաց, փոխարկի՛չ կարեաց, կարգաւորի՛չ կրից, յարմարի՛չ բանից, սանձարկո՛ւ լեզուի, շրջադրութի՛ւն շնչոյ, կացուցի՛չ հագագի, ամփոփի՛չ խորհրդոց, կրթարան կամաց, արձանացուցի՛չ յուզմանց, հանդարտութի՛ւն մրրկաց, խաղաղութի՛ւն ծփանաց, որ ունիս զթեւոց ամենընթաց իշխանականիս, եւ իմաստութեամբ նուաճեալ առ քեզ դարձուցանես։

Գոհաբանեալ մի՛շտ երախտաւոր, որ հեզութեամբ անհպարտութեան երկայնամտեալ՝ հանգչիս տենչանօք, անճառ հրա-

շիւք յանձինս սրբոց։ Թագաւոր էի՛ց համայնից՝ ամենայնիւ ծանուցեալ գթած. սկզբնահա՛յր եւ նախաշաւիղ՝ սիրոյն ըն-

թացից. ճանապա՛րհ կենաց, որ առաջնորդես քաղցրութեամբ՝ դիմելոյս ի լոյսդ վերին։ Զեռնկալու մե՛ծ վստահութեան, որ ո՛չ թողացուցանես գայթակղեցելոյս ի վայր կործանիլ. յուսո՛յ կերպարան ճշմարիտ, առհաւատչէիւ աղաչողաց մատանց՝ յայտնի երեւեալ. ապաւինութի՛ւն հանգստեան՝ որ ո՛չ երբեք մատնես՝ վտանգի դատապարտութեան։ Ազատութի՛ւն շնորհաձիր, որ տաս լիապէս՝ առանց փոխատրութեան փրկանաց. առատութի՛ւն աննախանձելի, որ քոյին փառաւորութեամբդ՝ զանարգ նիւթ հողոյս ճոխացուցանես։ Պայծառութի՛ւն անըստուեր, որ ճառագայթիւք ահեղ բարձրութեան պարածածկեալ զթշուառս՝ կրկին բարգաւաճ առնես։ Քաւի՛չ մեղանաց բազմաց, որ զհերքեալս ի փրկութենէ՝ առաջնոյն պայծառութեամբ նորոգեալ վերըստին վայելչացուցանես։ Հնարաւո՛ր դիւրահաս՝ առ ամենայն անբաւ գերամբարձութիւն յաւէտ յառաջեալ, ե՛լք վըստահութեան՝ առ խոստացելոցն վայելս. երանութի՛ւն անձկալի, յոր զկենդանութիւն չնչոյս լքանել է ախորժելի՝ զի զքեզ

գտից, կենդանի՛։ Կա՛մք անփոխադրելի, առ ի քաւութիւն գերւոյս զօրացեալ ամենագովելի. անսխալելի դե՛ղ կենաց, որ եւ մեռելոց բնաւին եղծելոց՝ առնես զսքանչելիս։ Ամենաստե՛ղծ աներկբայելի, որ զհուրբ կիզեալն, եւ զհողմով հոսեալն, եւ զժանեօք գազանաց ծախեալն ի քթթել ական նովին հիւթականութեամբ անպակաս յարուցանես։ Անհաւասա՛ր համարձակութիւն, յորում Աստուածօրէն պանծանօք պարծիլն է իրաւացի։

Հայեա՛ց, Տէր, յերկնից զուարթ քաղցրութեամբ՝ յամենակործան վտանգ նեղելոյս, եւ արա՛ անդորր հանգստական դիւրաւոր՝ ի բազմատագնապս հեծութենէ։ Եւ զյարուցեալ գումարս սատակչացն, եթէ՛ սպառազէնք այսական դժնեայ հնարաւորութեան՝ բուռն մարտակցաց, պատկանեալ զինուք, եթէ՛ մեղաց տգեղ՝ եւ քո ատելի կերպարանք, եթէ՛ ցաւոց եւ ախտից՝ վատնիչ եւ կորստական նշմարանք, մերժեսցես, հանցես, հատցես, խափանեսցես, եւ հալածեսցես՝ հեռի սահմանաւ իսպառ տարագրեալ, անդարձ որոշմամբ

վերստին կորստեանն. եւ կառուսցե՛ս, կա-
ցուսցե՛ս նպատակ կենաց եւ ամուր մա-
հարձան զնշան Խաչիդ՝ ապաւինելոյս ի քեզ
փրկութիւն։ Եւ յայսմ անպարտ անպատիր
եւ անվանելի արուեստից՝ ահաւորիդ մե-
ծութեան, լուծցին որոգայթքն գաղտնա-
ծածուկ, սատանայականք, կապտեսցին
մեքենայքն, վատնեսցին գայթակղու-
թիւնքն, խայտառակեսցին հաղբիցն դրու-
թիւնք, յայտնեսցին երեւոյթք որսոյն,
գտցին նենգողին ծուղակք, վերասցին
վարմին վերարկուք, տոչորեսցին որոմանցն
բոյսք, նզովեսցին բռնաւորին չարաբանու-
թիւնք, կտրեսցի լար խաբէութեան ի մահ
որսողին, պարսեսցին պատրողին բանսար-
կութիւնք, պակասեսցին զէնք զրպարտո-
ղին, անկցին սուսերք մահաբերին, սուզես-
ցին սադրողին պատրաստութիւնք, արձա-
կեսցին տոռունք տագնապողին։ Այլայլես-
ցին սուտ կերպարանք կեղծաւորին, սա-
տակեսցին խրոխտականացն խիստ յարձակ-
մունք, ցրուեսցին կցորդութիւնք կերչացն,
բաժանեսցին ազինք աւազակացն, քայքա-
յեսցին բոյլք բարբարոսացն, քանդեսցին

ամրոցք ապստամբողացն, արգելցին ամպ-
րոպք յանդգնելոցն, փարատեսցին փորձո-
ղին անձրեւք, հալեսցի եւ ցամաքեսցի
եղեամն աղանդաւորին։ Խորտակեսցի եղ-
ջիւր գոռոզին, մանրեսցին ամբառնալիք
դրօշիցն կերպարանաց, փշրեսցին ամբար-
հաւաճութիւնք հպարտացելոցն, նահան-
ջեսցին դիմեցմունք ճակատելոցն, քակ-
տեսցին միաբանութիւնք զօրացն Բելիարայ՝
թէ՛ անմարմինք եւ թէ՛ մարմնաւորք, փա-
խիցեն ընդ նոյն ճանապարհ ի մի շաւղաց
հետոց, յեօթն տարակոյս. ի գուբն ինձ
փորեալ՝ ինքեանք ընկճեսցին։ Ցեղանա-
կեսցին ձմերունք ձանձրացուցչին, հատցի
կապն՝ կցորդութեան մշտաջան աւազակին,
նողկասցի մտացս կայից՝ համբոյր չողո-
քորթին, ընդմիջեալ մեկնեսցին՝ նետաձգու-
թիւնք նեղչին, կացցէ ի սասանման՝ նաւ
խարդախողին, խլեսցին յարմատոց անտի՝
ատամունք խածանողին։

Վասն փայտիդ օրհնութեան կենաց՝
յորում պրկեցար Աստուածդ անըմբռնելի,
յիշատակաւ բեւեռացդ՝ որով ի գործի մա-
հուն մածուցար արարիչդ երկնի եւ երկրի,

արեամբդ տէրունականաւ՝ որով զվիշապն մեծ կարթիւ ածեալ որսացար, լեզուոյն դառնութեամբ զոր արբեր, որով զդեղատուութիւն կորուսչին արտաքս հեղեր, պատմաբանութեամբ ըղձական ճառից կրիցն սարսափելեաց՝ որով զլրբութիւն հակառակողին ըմբերանեալ ամաչեցուցեր, անուամբդ անհասականաւ ամենայնիւ անթարգմանելւոյդ՝ յորմէ դողան եւ դատապարտին սոսկացեալ սաստիկ սարսափմամբ բնութիւնք ամենայն երեւութից եւ անեւրեւութից. եղիցին այս ամենայն պարգեւք շնորհաց՝ խոստովանելոյս ի պաշտպանութիւն, ի բժշկութիւն եւ ի քաւութիւն։ Եւ մահաբեր դառնաթոյն օձին, եւ որ ի նմա ազդեաց տիեզերադաւ չարութիւնն՝ ի սատակումն եղիցի նորին. նոյն ինքն ի կորուստ, և յանբժշկական հարուած տանջանացն՝ սովաւ մատնեսցի, կապեսցի եւ ըմբռնեսցի։ Եղիցի՛ ողորմութիւն ստեղծողիդ ընդ իս, եւ չունչ ոգւոյս իմ ընդ քեզ անբաժանօրէն կապաւ միացեալ ի մի։

Եւ որ ոք ընթերցցի զայս աղերս ձայնի մաղթանաց՝ գոչման աղօթից, հայցման

ծերոյ եւ տղայոյ, կուսի եւ երիտասարդի, եւ եթէ յաղախնեաց ոք պաղատեսցի աստուածսիրաբար, հաւասարապէս անաչառութեամբ ընկալցին ի քէն մասն երանութեան՝ պարտուց ազատութեան, հաստեալ վերըստին յանարատութիւն նորոգ մաքրութեան, նկարեալ դարձեալ զքոյդ կերպարան անփոփոխելի։ Ահա՛ տիրապէս հնարաւոր, զօրեղ, անպատում, անհաս, անիմանալի, տեսցե՛ս աստանօր ի հառաչանս կողկողանաց այսր հեծութեան, որ ի բոլորից շրջանց ընծայեալ քեզ մատուցանի, վասն Հօր քո երկնաւորի եւ բարերարի, եւ Հոգւոյդ Սրբոյ՝ փառակցի եւ կենդանատուի. Աստուածածնիդ բարեխօսութեամբ եւ խընդրբուածովք ամենայն սրբոց։ Զի դու ստեղծեր զամենայն, եւ ի քէն եղեն ամենայնք, եւ դու տիրես ամենայնի. եւ քեզ փա՞ռք յամենեցունց, մի՛նդ յիսկութենէ՝ անժամանակ Երրորդութեանդ՝ զուգակցապէս փառաւորեալ յանբաւս, եւ յաւիտենից յաւիտեանս. Ամէն։

ԵՐԳԵԼՆ ԴՊՐԱՑ ԶՏԱՂՍ

Նշանակէ զխնդութիւն եւ զհրճուումն աշակերտաց վասն Յարութեան Տեառն մերոյ։

ԱՂՕԹՔ

Տէ՛ր իմ Յիսուս Քրիստոս, որ քոյով փառաւոր յարութեամբդ զհաւատացեալս քոյ բերկրեցուցեր. շնորհեա՛ մեղաւորիս՝ զի ի յարութեան յաւուրն յետնում արժանի լինիցիմ բերկրիլ եւ ուրախանալ ընդ պարս երջանկաց եւ երանելեաց յարքայութեան քում. Ամէն։

Յարեաւ Աստուած եւ գրուեցան
ամենայն թշնամիք նորա:

ԴԱՌՆԱԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԸՆԾԱՅԻՆ ԱՌ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ԱՍԵԼՈՎ «ԿԵՑՈ՛Ղ ՏԷՐ»

Նշանակէ զերեւիլն Տեառն մերոյ յետ Յարութեան իւրոյ։

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Աստուա՛ծ մեր, և տէ՛ր մեր երևեցաւ մեզ, օրհնեալ եկեալ անուամբ Տեառն։

ԱՂՕԹՔ

Երբ ասի «Լցաք»

Գոհանամ զքէն՝ Հա՛յր ամենակալ, Որդիդ միածին, և Հոգիդ ճշմարիտ, որ ընտրեցեր զհաւատացեալս անուանդ քում սրբոյ ի մասն վիճակի սրբոցն ի լոյս. եւ ստացար քեզ ժողովուրդ սեպհական, և արարեր հաղորդ փառաց Աստուածութեանդ, եւ ժառանգորդ անճառ բարութեանց քոց. ո՛չ ըստ մերում արժանաւորութեան, այլ ըստ անբաւ գթութեան քո, որ միշտ շնորհես առատապէս եւ ոչ նախատես. փոքր պահանջես, և մեծամեծս պարգեւես։ Այո՝ օրհնելով օրհնեմք և գոհանալով գոհանամք

Համբարձաւ Աստուած օրհնութեամբ
եւ Տէր մեր ձայնիւ փողոյ:

զքէն, Տէ՛ր Աստուած մեր, որ յայսմ մասին զմեզ արժանաւորս կացուցեր։ Աղաչեմք զքեզ, մի՛ թողուր զմեզ ի ձեռաց քոց յայսմհետէ մինչեւ յաւիտեան. եւ եկեսցէ ողորմութիւն քո ի վերայ մեր զամենայն աւուրս կենաց մերոց, եւ եղիցի անուն քո օրհնեալ յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

ԱՍԵԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ

«Օրհնեալք եղերուք»

Նշանակէ զօրհնութիւն Տեառն մերոյ զոր ետ հաւատացելոց իւրոց ի համբառնալն յերկինս։

ԱՂՕԹՔ

Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ ի համբառնալն քո առ ի յերկինս օրհնեցեր զհաւատացեալս քո՝ խոստանալով նոցա զմխիթարիչ Սուրբ Հոգին. շնորհեա՛ մեղաւորիս զի յամենայն խորհուրդս, ի բանս եւ ի գործս իմ օրհնութեան քում Աստուածայնոյ եւ շնորհաց Հոգւոյդ Սրբոյ արժանի լինիցիմ. Ամէն։

ԱՂՕԹՔ

ՅԵՏ ԱԻԱՐՏՄԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ

Սկիզբն եւ կատարումն ամենայնի Աստուած, որ ամենայն բարի ի քէն սկսանի և քեւ կատարի, եւ ի քեզ բովանդակի ամենայն, ի վախճան աղօթիցս ողորմեա՛ մեզ, և լեր ընդ մեզ զամենայն աւուրս կենաց մերոց. և եղիցի՛ ամենազօր աջ քո պահապան մեզ յամենայն ժամ ի տուէ և ի գիշերի, ի ննջել և ի յառնել եւ զամենայն գործս մեր ի բարին կատարեա՛. Ամէն։

Ի ՀԱՄԲՈՒՐԵԼՆ ԶԱԶ ՊԱՏԱՐԱԳԶԻՆ

ԵՐԳ

Յիշեսցէ՛ Տէր զամենայն պատարագս քո, և զուխտս քո ընդունելի արասցէ։

ԱՂՕԹՔ

Ի ՍԿՍԱՆԻԼ ԳՈՐԾՈՅ

Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ, Տէ՛ր, և զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ։

ՀԱՌԱՋԱՆՔ

ՆԱԽ ՔԱՆ ՋԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅ — ԲԱՆ ԻԼ.

Եւ քանզի ըստ ողբաձայնիցն բանաստեղծութեանց վերընծայելոց՝ զդրութիւն թուոցս յարմարեցի կական եւ հեծութիւն, հառաչանք կողկողագինք, դառնութեան լալումն եւ արտասուաց երգք. դարձեալ սկսայց զճառ պաղատանացս խոստովանօրէն զղջականաբար, զգաղտնածածուկսն յայտնաբարբառ, զի անդրադարձութեամբ սկզբմանցն եւ վերջնաւորօքն բառիւք, զնոյն համաձեւութիւն ի մի թախանձ նմին մաղթանաց հոգեկեցոյցն խոնարհութեան՝ աստանօր եդից։

Մեղա՞յ մեծիդ բարերարութեան՝ անարգըս մեղայ. մեղայ ծագմանդ ճառագայթից՝ խաւարս մեղայ, մեղայ շնորհացդ անբաւ երախտեաց՝ արդարեւ մեղայ. մեղայ սիրոյդ վերնում գթութեան՝ յայտնապէս մեղայ. մեղայ ստացողիդ յոչէութենէ՝ ստուգապէս մեղայ. մեղայ գերունակ գոգոյդ գրկանաց՝ անբաւս մեղայ. մեղայ

աննուազ լուսոյդ վայելման՝ նենգողս մեղայ. մեղայ ճաշակման անճառդ կենաց՝ բազումս մեղայ. մեղայ անհաս պարգեւեցդ ձրից՝ հանապազ մեղայ. մեղայ գովեալ մարմնոյդ Աստուծոյ՝ մահու չափ մեղայ. մեղայ պաշտելի արեան Արարչիդ՝ իսկապէս մեղայ։

Ահա՛ արդարեւ օրհնեալ է հատուածք բանի յուսադրական սրտի այսր մեղայի. սոյն սա՝ պատուելի աւանդ, անմոռաց պատուէր, հայրենեացն տուր, նախահարցն օրէն, համայնից թոշակ, անհերքելի բան, զօրաւոր պատասխանի, կենդանութեան կամուրջ, ախորժելի վերնոյն, սիրելի սըրբոց, անխզելի կապ, հրաշալի բարբառ, անշրջելի պատճառ, բաղձալի աղերս, փափաքելի սեղան, սրտաբեկ հնչումն, անհնարից ճարակ, կարծրութեան վանիչ, աստուածապաշտից սահման, հեթանոսաց դիրք, վաղնջուց կանոն, քրիստոնէից հարազատ, արարչութեանն յաղթող, անջրպետ հզօր, խտրոց ահաւոր, արուեստ բարձրութեան, խորութիւն անչափ, հիացման տեսիլ, խորհուրդ կնքեալ. ընդ որ չիք ումեք անցա-

նել՝ եթէ ոք անըմբռնելի մտաց արագման զսա ծանիցէ։ Զայն բարեպատեհ հրաշաւորական, որ ո՛չ յիշատակեցաւ ի վերջին դատակնիք դասուն լքելոյ. գուցէ առ նմին խզեալ համառօտ զվրիժակն իրաւանց մահուն հասելոյ, յորմէ ընտրութիւնն ապագործ եղեալ՝ զսահմանն՝ յաւիտենական քակտեսցէ։ Զարդ փառացն՝ մեծութեան, որով նոյն ինքն Աստուածութիւնն պսակեալ բարգաւաճի։ Քանզի ո՞վ ոք դիմեալ կալաւ զեղջերաց սեղանոյ այսր սրբութեան, եւ ոչ առ ժամայն պրծեալ ի պատժոց անարատ գտաւ։ Իսկ եթէ Ա.քար զարմեան եւ Սաւուղ կիսեան, եւ Յուդա սիմոնեան՝ ասելով զսոյն ոչ արդարացան, եւ ես վկայեմ իրաւամբք՝ խոստովանեալ զայս պայման բանի, զի յակամայիցն բըռնադատելոց ո՛չ է կատարեալ սէր. ուստի եւ ո՛չ բովանդակապէս փրկութիւն։ Իսկ ես կամաւ համբուրեմ՝ դարձեալ կրկնելով զերջանիկ բանիդ զմկրտութեան հարազատս։

Մեղա՜յ երախտեացդ մոռացութեան՝ վերստին մեղայ. մեղայ մարմնոյ ձեռն յոգի հարեալ՝ յիմարս մեղայ մեղայ առ կեանդ

դրժողութեան՝ իսկ եւ իսկ մեղայ. մեղայ բանիդ ապախտ առնելոյ՝ չարաչար մեղայ. մեղայ ի յօր սատակման ինձէն ստիպեալ՝ վատթարս մեղայ. մեղայ պարտականս անկենդան մահուն՝ ձաղելիս մեղայ. մեղայ անպատկառս քո բարձրութեան՝ տաղտկալիս մեղայ։ Վերջին ինձ կրկին աշխարհ հոգեւոր՝ զի ի կորուստ եւ ի կործանումն ինձ երեւեցայ. զի անդարձս վարատեցայ, զի որդիս թշնամի գրեցայ, զի ի բարձանցն երկնից ընկեցայ, զի փուշս վարուց դիզեցի։ Եւ եւս առ սմին ողբք աղաղակի, զի անձամբ զանձն անարգեցի, զի բազին կորուաչին գտայ։

Այլ ինձ կսկիծ դժնդակ սրտի, զի զիս ունին առ որ չեմ, զարտաքնայարդար բաժակս անմաքուր, զբռեալ որմս գարշունակ, զսին պարծանօք պաճուճեալս, զլոյսս ի մռայլ շրջեալ, զգերանակիր ակնս՝ թշուառացեալ, զջահս փառաց՝ շիջեալ, զամենայնիւս յամենայնի ամենայն իրօք վնասակարս, առ տնօրինականն տէրունականս, առ յայտնութիւնս աստուածայինս, առ երեւմունս արարչագիրս, առ խոնարհու-

թիւնն սարսափելիս, առ այն զոր տեսի աչօք իսկ իմովք, առ որ մեծ է պատասխանատուութիւնս քան առ համօրէն Աւետարանն. զարմանս, հիացմունս, հոգս հալողականս, անդաճմունս անհնարաւոր, թուականութիւնս մտաց անբարդելիս, ելմունս անկատարս, իջմունս անհաստատս, յուսահատութիւնս յարմարականս, յանդիմանութիւնս պատշաճականս, ձաղանս պատեհագոյնս, նզովս իրաւացիս, անէծս արժանահատոյցս։ Արդ՝ այսոքիկ են մեղաւորիս իմ կշտամբութիւնք, եւ ինքնահարուած տանջանաւորութիւնք։

Եւ քանզի կարող ես զայս ամենայն զպարտս թողուլ, եւ զխայթուածս մահու բժշկել, Տէ՛ր ողորմութեանց, Աստուած բոլորից, Քրիստոս թագաւոր բարձրեա՛լ Հօր Որդի, ստեղծի՛չ, գթա՛ծ, բարերա՛ր, օրհնեա՛լ, առա՛տ, հարո՛ւստ, հզո՛ր, ողորմա՛ծ, տեսո՛ւչ, ձեռնկա՛լ, հաստի՛չ, ապրեցուցի՛չ, դարմանի՛չ, կեցուցի՛չ, երկայնամի՛տ, անոխակա՛լ, ապաւէ՛ն, բժի՛շկ, գովեա՛լ, երկնաւո՛ր, անճա՛ռ, լո՛յս,

կեա՛նք, յարութի՛ւն, նորոգութի՛ւն, քա-
ւութի՛ւն։

Եթէ՛ հայեսցիս մարդասիրութեամբ, ըստ որում քոյդ են սովորութիւնք, նայեցեալ ի քեզ կողկողիմ եւ ես. եթէ՛ լուիցես՝ հառաչեմ. եթէ՛ ունկն մատուցանիցես՝ պաղատիմ. եթէ՛ անսայցես՝ աղերսեմ. եթէ ներեսցես՝ աղաչեմ. եթէ՛ առիս դառնայցես՝ գոչեմ։ Ապա եթէ՛ անտես առնիցես՝ կործանիմ. իսկ եթէ՛ առ ոտն հարկանիցես՝ լամ. եթէ՛ զոգեպահն ոչ ընծայեսցես՝ մեռանիմ. ապա եթէ՛ ահարկու դէմս ցուցանիցես՝ սատակիմ. իսկ եթէ՛ սաստեսցես՝ դողամ. եթէ՛ խեթիւ տեսանես՝ սոսկամ. ապա եթէ՛ սաստկանաս՝ սարսափեմ. եթէ՛ հալածես՝ հեծեմ. իսկ եթէ՛ ընդ վայր հարկանիցես՝ հերքիմ. եթէ՛ զողբոց վհատութիւնս ոչ առցես՝ տագնապիմ. եթէ՛ խստանաս՝ փախնում. ապա եթէ՛ սպառնաս՝ ընկճիմ։ Իսկ եթէ՛ քննես՝ քարկոծիմ. ապա եթէ՛ ուժգինս ակնարկես՝ սուզանիմ. եթէ ո՛չ անխայեսցես՝ մերժիմ. եթէ՛ կոչեսցես՝ խիթամ. իսկ եթէ՛ աչս յառեսցես՝ ամաչեմ. եթէ՛ ձայն տացես՝

երկնչիմ։ Զբարեացն պարգեւ մատնեալ, զերանութիւնն թողեալ, զշնորհն լքեալ, զուխտն ցրեալ, զաւանդն կենաց մոռացեալ, զհամարձակութեանն վստահութիւն կորուսեալ, զստեղծիչդ էիցս բարկացուցեալ, զանճառութիւն շնորհին ընդ ոտնեալ, զպատուոյն պատկեր այլայլեալ։

Իսկ եթէ առ այս խեղդ մահու հեծութեան ցաւոցս մարդասիրեալ՝ առ իս ժամանեցուսցես, Տէ՛ր Յիսուս Քրիստոս, զազդեալն գիր լնանիլ ի յիս, եթէ բժշկութիւն դադարեցուցանէ զմեղս մեծամեծս, որով ամենառատ քաղցրութեամբ քով պատուաստեալ ի քեզ, զքոյդ կերպարան լուսոյ լցեալ եւ նկարեալ յոգի՝ վերստին գտեալ պնդեցայց քաւեալ, եւ ստեղծեալ կրկին ի փրկութիւն անմահից կենացն անախտականաց. եւ քեզ ընդ Հօր Հոգւովդ Սրբով փառք յաւիտեանս. Ամէն։

ՁՂՁՈՒՄՆ

Մեղայ Ամենասուրբ Երրորդութեանն՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ Մեղուցեալ եմ Աստուծոյ, խոստովանիմ առաջի Աստուծոյ՝ և Սրբուհւոյ Աստուածածնին, եւ առաջի քո Հայր սուրբ՝ զամենայն մեղս զոր գործեալ եմ։ Քանզի մեղայ՝ խորհրդով, բանիւ և գործով. կամայ և ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ. մեղայ Աստուծոյ։

Մեղայ հոգւովս և զօրութեամբ սորա, մտօքս և շարժմամբ սորա. մարմնովս եւ զգայութեամբ սորա։ Մեղայ զօրութեամբ հոգւոյս. խորամանկութեամբ, անզգամութեամբ, յանդգնութեամբ եւ երկչոտութեամբ, շռայլութեամբ և ժլատութեամբ, զեղխութեամբ և անիրաւութեամբ, չարահաւանութեամբ, յուսահատութեամբ, եւ թերամտութեամբ. մեղայ Աստուծոյ։

Մեղայ չար խորհուրդով մտացս, նենգութեամբ, ատելութեամբ, խեթիւ, մախանօք, յաչաղանօք, թուլութեամբ, պոռնկական խորհրդով, արուական, իգական, ա-

նանական, գազանական. ի գիշերի և ի տունջեան՝ երազական գիճութեամբ, և անրջական գարշ աղտեղութեամբ. մեղայ Աստուծոյ։

Մեղայ ցանկութեամբ մարմնոյս, հեշտութեամբ, պղերգութեամբ, յօրանջմամբ քնոյ, շարժութեամբ մարմնոյս, եւ գազրագործութեամբ ի պէսպէս ախտս. հեշտալրութեամբ լսելեացս, արատութեամբ աչացս, ցանկութեամբ սրտիս, պագշոտութեամբ, անժուժկալութեամբ, շուայտութեամբ, և արբեցութեամբ. մեղայ Աստուծոյ։

Մեղայ չարաբանութեամբ լեզուիս. ստախօսութեամբ, սուտ երդմամբ, երդըմնազանցութեամբ, հակառակութեամբ, վիճաբանութեամբ, բանսարկութեամբ, շոգմոգութեամբ, քսու, դատարկաբանութեամբ, և ծաղու, զրախօսութեամբ, հերձախօսութեամբ, և անիծաբանութեամբ, տրտնջելով, դժգոհելով, բամբասելով, և հայհոյելով. մեղայ Աստուծոյ։

Մեղայ գողութեամբ ձեռացս, ագահելով, զրկելով, հարկանելով, սպանանելով,

և ընդ գարշս ածելով. մեղայ Աստուծոյ։

Մեղայ ամենայն յօդուածովք չինուածոյս եւ ամենայն անդամօք մարմնոյս. հնգեակ զգայարանօքս, և վեցեկի շարժմամբս. վերամբարձ ոտնահարութեամբ, և վայրաքարշ մեղկութեամբ. յաջ և յահեակ խոտորելով, զառաջնոցն մեղանչելով, եւ վերջնոցն չար նչաւակ գոլով. մեղայ Աստուծոյ։

Այլ և մեղայ եօթնիցս յանցանօք՝ մահացու մեղօք. հպարտութեամբ, նախանձու, բարկութեամբ, ծուլութեամբ, ագահութեամբ, որկրամոլութեամբ, բղջախոհութեամբ, և մասամբք սոցին. մեղայ Աստուծոյ։

Այլ և մեղայ ամենայն պատուիրանացն Աստուծոյ, յանձնառելեացն և հրաժարելեացն, զի ոչ զյանձնառականսն կատարեցի, և ոչ ի հրաժարելեացն հեռացայ։ Զօրէնս առի՝ և յօրինացն հեղգացայ. ի կարգս քրիստոնէութեան հրաւիրեցայ՝ եւ գործովս անարժան գտայ. գիտելով զչարն կամաւ կորացայ, և ի բարեաց գործոց ես ինձէն հեռացայ. վա՛յ ինձ, վա՛յ ինձ, վա՛յ

ինձ։ Զո՞ր ասեմ, կամ զո՞ր խոստովանիմ. զի անթիւ են յանցանք իմ, անասելի են անօրէնութիւնք իմ, աններելի են ցաւք իմ, և անբժշկելի են վէրք իմ. մեղայ Աստուծոյ։

ՅԵՏ ԽՈՍՏՈՎԱՆԵԼՈՅ ԶՄԵՂՍ

Քննո՛ղ գաղտնեաց մեղայ քեզ, կամայ և ակամայ՝ գիտութեամբ և անգիտութեամբ. թողութիւն շնորհեա՛ մեղաւորիս, զի ի ծննդենէ սուրբ աւազանին մինչև ցայսօր՝ մեղուցեալ եմ առաջի Աստուածութեան քո. զգայարանօք իմովք և ամենայն անդամօք մարմնոյս. և ողորմեա՛ քո ապարատոց՝ և ինձ բազմամեղիս։

Հայր սուրբ, զքեզ ունիմ միջնորդ հաշտութեան և բարեխօս առ միածին Որդին Աստուծոյ. զի իշխանութեամբդ որ տուեալ է քեզ, արձակեսցես զիս ի կապից մեղաց իմոց, աղաչեմ զքեզ։

ՀԱՌԱՋԱՆՔ

ՆԱԽ ՔԱՆ ԶՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅ — ԲԱՆ ԽԷ.

Եւ արդ, զի՞նչ գոյ ասել ամաչեցելոյս յերեսաց մեծիդ ահաւորութենէ, բայց եթէ համբանալ, և հող ի բերան եղեալ, լռել ի սրտի՝ ըստ մարգարէութեանն խրատու, ահա՛ ի բարւոյն կարկառեալ ի յոյս։ Իսկ եթէ զփականս չարժողութեան շրթանցս բացից, բռնադատեցից՝ խօսել կամեցեալ, դարձեալ զնոյն ձայն կրկնակական եղերերգութեան լալեաց բազմութեան՝ խէթ մըտացս յառաջադրէ։

Եւ արդ, ողբակից մեծ մեղաւորին՝ անօրինեցելոյ կամաւ առ ի մահ, զնորին գոչումն երկրորդեցից և ես ընդ նմին. մեղա՛յ, Տէր, մեղա՛յ, և անօրէնութեանց իմոց ինձէն վկայեմ։ Հիւսեալ ընդ նմին զբանս յիսներորդի Սաղմոսին, անթիւս գրեմ զպարտուցս սակ՝ անձինս մեղանաց՝ քան զհող երկրի հողմահոս փոշւոյ ընդ օդս տարածեցելոյ։ Մեղայ յերկինս եւ առաջի

քոյ, ընդ Անառակ որդւոյն պատկառեցելոյ՝ հայրենի գթոյթ վերստին դարձեալ թա-խանձ արկանեմ եւ զողորմելին ձայն ա-ղերսանաց՝ արտօսրածին ողբովք գոչման ի տխուր դէմս մատուցեալ, առաջի քոյ տարածանեմ։ Հայր գթութեանց, Աստուա՛ծ բոլորից, չեմ արժանի կոչիլ եւ ո՛չ բնաւին առ այս անուանիլ, ո՛չ միայն որդի, այլ եւ անպիտան ապաբան վարձկան։

Ընկա՛լ զսովեալս տարագրական՝ պար-տապան վնասուց եւ զցաւ քաղցոյս լլկա-նաց նեղելոյս եւ նուաղելոյս՝ կենաց քո հացիւդ բժշկեսցես։ Լե՛ր ընդ առաջ քո ողորմութեամբդ՝ ի սկզբնաւորս ապաւի-նութեան. զգեցո՛, գթա՛ծ եւ անոխակալ, անօրինեալս մեղապարտի՝ զնախակապուտ հանդերձին ծածկոյթ. աւանդակորոյս ձե-ռացս աղտեղեալ մեղօք, զկնիք մատան-ւոյն համարձակութեան՝ ամենառատ կամօք մատուսցես. զգարշապարացս թշուառու-թիւն մերկութեան ոտից՝ պատսպարու-թեամբ աւետարանական ամրավերարկու օդիցս կօշկաց՝ ի յօձին թիւնից միշտ ամ-րացուսցես։ Զզուարակդ պարարակ եղինդ

երկնայնոյ, որ է միածին Որդիդ քո՝ օրհնեալ իսկապէս մարդասիրութեամբ, կարօտելոյս բարեաց՝ նուիրեա՛. որ մատուցեալ միշտ եւ անպակաս մնայ ի լրութեան յաբակայ, զենեալ ի սպանդարանի անթիւ սեղանոց՝ անսպառութեամբ. բոլոր յամենեսին եւ բնաւ յամենայնում, էութեամբ յերկինս եւ իսկութեամբ ի ստորինս, աննուազ մարդկութեամբ եւ անթերի Աստուածութեամբ. փշրեալ բաշխի ի մասունս անհատս, զի զհամայնն հաւաքեսցէ առ ի նոյն մարմին իւրում գլխոյ. քեզ փառք ընդ նմին, Հա՛յր ողորմութեան, յաւիտեանս. Ամէն։

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Ի ԺԱՄՈՒ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

Ինձ մերձենալ առ Աստուած բարի է, եւ դնել զյոյս իմ առ Տէր։

Զբաժակ փրկութեան ընկալայց, եւ զանուն Տեառն կարդացից։

Զբերան իմ բացի եւ առի զհոգի, ի պատուիրանս քո փափաքեաց անձն իմ։

ԱՂԵՐՍԱՆՔ

ՅԵՏ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅ — ԲԱՆ Բ.

Եւ արդ՝ քանզի առ բարձրեալն Աստուած յօդաւորական շրթամբք կարդաս, որ գործովք միայն գրաւի եւ ոչ ստեղծաբանութեամբ կաշառի, որ յԵգիպտոս միշտ ունիս զսրտիդ զդարձն, զի՞նչ օրինակ առ այս քեզ նմանագոյն եւ յարմարական աստանօր եղից՝ անձն իմ պարտաւոր։ Պատժակիցս կործանեցելոյն Սոդոմայ, ըմբերանեալ դատախազս Նինուէի, անարի բարբարոսս քան զտիկինն հարաւային, վատթարագոյնս քան զԿանան, յամառեցեալս քան զԱմաղէկ, անբժշկականս քաղաք դըրօշելոց, նշխար մնացեալ՝ ապստամբութեան հինն Իսրայելի, յիշատակարան պահեալ՝ ուխտազանցութեանն Յուդայ. կըշտամբեալս գեր քան զԾուր, տարամերժեալս քան զԾայդան, խորդաբարոյս քան զԳալիլեա, աններելիս քան զանհաւանն Կափառնաում, պարսաւեցեալս իբր զԿորա-

զին, բամբասեցեալս ընդ Բեթսայիթայ, անպարկեշտ ծաղկեալ ալիքս՝ Եփրեմի, աղու աղաւնիս միշտ յիմարութեամբ՝ այլ ո՛չ հանդարտութեամբ, ի կորեանց առիւծուց՝ անձնական օձս եղեռնային, կերպս ձուոց քարբից՝ լցեալ ժանտութեամբ, պատկերս վերջին հարուածոցն՝ Երուսաղէմի, ըստ բանին Տէրունի՝ եւ տեսանողացն ձայնի։ Տաղաւարս մերժեալ՝ հասեալ ի կործանումն, խորտակեալ դրացս վստահարան, եւ կրկին ծրդեալ շինուածս խօսուն, թողեալ ժառանգութիւնս յարմարական, մոռացեալ տունս Աստուածակերտ, ըստ բանից նախագրելոցն՝ Մովսէսի Դաւթայ եւ Երեմիայի։ Ցարկս բանական՝ ունողս բորոտութեան, հարուածեալս խրատու քերմանն՝ օրինիւ կազդուրեալ, օծեալ կաւովն՝ ողոքական հեզութեամբն. անճարակ գտեալ յելս հնարից, քակտեալ վերստին ձեռամբ շինողին, արտաքս ընկեցեալ իրաւացի հատուցմամբ հրամանաւ հզօրին՝ ի տեղի անսուրբ. հերքեալ տարագրեալ խտրոցաւ մեծաւ՝ ամենայնիւ առանց խնայելոյ, ծածկեցեալ դրամս յերկրի չարեօք, ըստ աւան-

դակորոյս ժխտողին՝ որ յաւետարանին ցուցանի։

Այլ դու, Աստուած, Աստուածդ հոգւոց եւ ամենայն մարմնոց՝ ըստ դաւանելոյ աստուածաշնորհին, երկայնամիտ եւ բազումողորմ՝ ընդ սրբոյն Յովհանու ձայնին, շնորհեա՛ կատարել ի քոյդ հաճութիւն օրհնեալդ կամաց՝ զսկզբնաւորեալ մատեան մաղթանաց այսր ողբերգութեան։ Եւ ընդ լալով սերմանել բանիւ ի նախընթաց չուս աստիճանաց օթեւանացս պատրաստութեան, ի կատարածն ժամանելոյ հաւաքման հնձոցն՝ դարձայց բերկրեցեալ լրութեամբ քաւութեան՝ պտղոյն երանութեան որ ահիցն բարութեան։ Մի՛ տացես ինձ արգանդ սրտի անորդի՝ իբր Իսրայելի, եւ ստինս աչաց ցամաքեալս, ո՛վ ամենագութ։ Լո՛ւր բանից մաղթողիս, հզօր եւ ողորմած, նախ քան երկնի, եւ երկին երկրի, եւ նա՝ ցորենոյ եւ գինւոյ եւ ձիթոյ, եւ նոքա Իսրայելի։ Եւ երկնաւորացն աղերս որ առքեզ՝ հոգւոյս ազդեսցէ, քան թէ տարերաց ապականացուաց։ Դու ստեղծիչ՝ եւ ես կաւ. բա՛ց տարակուսելոյս ի մուտս մաղ-

թանաց այսր հեծութեան՝ կամս քաղցրութեան՝ զօրանալ աստէն. զի մի՛ ի բանալ վերնայինն երկնի, անընտիր գտեալ կրթութեան վայելման լուսոյ՝ իբր զնիւթ մոմոյ սպառեցայց ջնջեալ ի միջոյ։ Ոգի՛ զրկելոյս, ըստ մաղթանաց գոչման ասողին, եւ ոյժ թալկացելոյս, եւ կեանք՝ մաշելոյս մտացս խղճիւ, այլ ո՛չ տաժանմամբ՝կրից աշխատութեան՝ զքեզ խնդրելոյ. ա՛ռ զաւանդ մաղթանացս, եւ տո՛ւր զողորմութիւն քո շնորհացդ. ընկա՛լ զփոքրս ի տկարէս, եւ շնորհեա՛ զմեծդ՝ առ ի հզօրէդ. զօրացո՛ զբանս զղջման, առաքեալ առ մեզ զՀոգիդ ի բարձանց՝ Աստուածաշունչ պատգամօքս ի սմա եդելոցս։ Պարգեւեա՛, բարերար, զառակն Եսայեայ լուսաւորել առ ճշմարտութիւնն, մատուցանելով մահու արժանոյս՝ ընդ պղնձոյս գոյի անարգս ձայնի՝ զոսկի քո շնորհի, ընդ անզարդութեան երկաթոյս սեւութեան գունոյս՝ պղինձ պըճնալից, ցոյցք առաքինութեան հրաշեկ Լիբանանի։

Ընդէ՞ր կարծրացուցանես զսիրտ եղկելոյս չերկնչել ի քէն, անճա՛ռ եւ ահա-

ւոր։ Մի՛ եղէց անպտուղ ի փոքր վաստա-
կոյս՝ իբր ապաջան սերմանող անբեր երկ-
րի։ Մի՛ լիցի ինձ երկնել՝ եւ ո՛չ ծնանել,
ողբալ՝ եւ ո՛չ արտասուել, խորհել՝ եւ ոչ
հառաչել, ամպել՝ եւ ո՛չ անձրեւել, ըն-
թանալ՝ եւ ո՛չ հասանել, ինձ ձայնել՝ եւ
քեզ ո՛չ լսել, պաղատիլ՝ եւ անտես մնալ,
կողկողել՝ եւ ո՛չ ողորմիլ, աղաչել՝ եւ ո՛չ
ինչ օգտել, զոհել՝ եւ ո՛չ ճենճերել, զքեզ
տեսանել՝ եւ դատարկ ելանել։ Լո՛ւր ինձ
նախ քան զկարդալս իմ առ քեզ, միա՛նդ
հզօր. մի՛ զանվճար տանջանացն տոյժս՝
ընդ թուով աւուրց մեղաց կեցելոյս՝ չա-
րագործիս ինձ հատուցաներ։ Կեցո՛ զիս,
զթա՛ծ. լո՛ւր ինձ, ողորմա՛ծ. մարդասիր-
եա՛, ներո՛ղ. խնայեա՛. երկայնամի՛տ.
պաշտպանեա՛, ապաւէ՛ն. բարերարեա՛,
հզո՛ր, ազատեա՛, ամենակա՛լ. կենագործ-
եա՛, նորոգո՛ղ. վերականգնեա՛, ահաւո՛ր.
լուսաւորեա՛, երկնայի՛ն. բժշկեա՛, հնա-
րաւո՛ր. քաւեա՛, անքննի՛ն. պարգեւա-
տրեա՛, առա՛տ. շնորհազարդեա՛, աննա-
խա՛նձ. հաշտեա՛, անախտակի՛ր. ընկա՛լ,
անոխակա՛լ. սրբեա՛ ի պարտաց, օրհնեա՛լ։

Եթէ յառեցից զաչս իմ նայեցեալ ի հայեցուածս երկուց վտանգից՝ յաւուր թըշուառութեան՝ զքոյդ տեսից փրկութիւն, յոյս և խնամակա՛լ. եթէ նկատեալ դիտեցից ի վեր յամենագրաւ ուղին սոսկալի, հրեշտակ քո խաղաղութեան՝ քաղցրութեամբ ինձ պատահեսցէ՛։ Ցոյց ինձ, Տէր, ի յելից աւուր չնչոյս արձակման՝ մաքրութեան ոգի լուսով ամբարձեալ ի յերկնաւորացն երջանկաց՝ պարգևօք սիրոյ քոյ եկեալ հասեալ յարդարոցն կատարելոց։ Կարեաց ինձ կցորդ ժամանեցուսցես. զանակնկալն բարի՝ չարիս. ի յուսահատութեանն աւուր՝ աւետարան չնորհեսցես։ Քա՛ւ լիցի քեզ, բարեբանեա՛լ, որ փրկութիւնդ ես ամենայնի, եթէ ախտացեալս քո՝ ոչխարի՝ զազան դժնդակ տացես ուղեկից, մեղօք մեռելոյս՝ անա՛խտ կեանք, կործանելոյս պարտեօք՝ փրկութի՛ւն։

Արդեօք մոռացի՞ս զբարերարելդ՝ ակընկալութի՛ւն. անտեսեսցե՞ս զգթասիրելդ՝ խնամո՛ղ. այլայլեսցե՞ս զմարդասիրելդ՝ անփոփո՛խ. նահանջեսցե՞ս զկենագործելդ՝ անվախճա՛ն. թողուցո՞ւս զողորմութիւնդ՝

երջանի՛կ պտուղ։ Աղաւաղե՞ս զքաղցրութիւնդ, բարեշնո՛ր ծաղիկ, անպատուեսցե՞ս զնիւթ պանծանաց քումդ ճոխութեան. յեղանակեսցե՞ս զփառս կենաց քումդ բարձրութեան. ո՞չ պահեսցես զվայելչական զարդ պայծառութեանդ քում պսակի։ Եթէ ողորմածացն է երանութիւն, այլ դու բնաւ իսկ արքայութիւն՝ լցեալ փափաքմամբ, ո՞չ զբոլորն պարգևեսցես փրկութիւն. ո՞չ մատուցանիցես դեղ վիրացս, ո՞չ սպեղանիս՝ խոցուածոյս, ո՞չ դարման՝ տկարութեանս. ո՞չ ծագեսցես լոյս ի խաւարի՝ յուսացելոցս ի քո զօրութիւնդ, ապաւէնդ կենաց, պարգե՛ւդ տիեզերաց։ Որ միայնդ ունիս փառս ինքնութեամբ, իսկութեամբ և ի յարակայ մշտնջենաւորութեամբ, վըկայեալ ի բնաւից, գովեալ ի բոլորից, օրհնեալ և փառաւորեալ յերիս յաւիտեանս, և անդր քան զպայման սահմանի իմանալեացն յաւիտենից. Ամէն։

Երեքարբեան մի Տէրութիւն,
Միով բնութեամբ Աստուածութիւն:

ՀԱՆԳԱՆԱԿ ՀԱՒԱՏՈՅ

Հաւատամք ի մի Աստուած՝ ի Հայրն ամենակալ՝ յարարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևութից։

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս՝ Որդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ՝ միածին այսինքն յէութենէ Հօր։ Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ՝ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ և ոչ արարած։ Նոյն ինքն ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղև յերկինս եւ ի վերայ երկրի, երևելիք և աներևոյթք։ Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան՝ իջեալ ի յերկնից մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն Սրբով։ Որով էառ զմարմին, զհոգի և զմիտ և զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք։ Զարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր։ Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր ի դատել զկենդանիս և զմեռեալս,

որոյ թագաւորութեան ոչ գոյ վախճան։

Հաւատամք և ի Սուրբ Հոգին՝ յանեղն և ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և ի Մարգարէս և յԱւետարանս։ Որ էջն ի Յորդանան, քարոզեաց զԱռաքեալն, և բնակեցաւ ի սուրբսն։

Հաւատամք և ի մի միայն ընդհանրական և յԱռաքելական Եկեղեցի, ի մի մըկըրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց։ Ի յարութիւն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց, յարքայութիւնն երկնից և ի կեանսն յաւիտենականս։

Իսկ որք ասեն՝ էր երբեմն, յորժամ ոչ էր Որդի. կամ էր երբեմն, յորժամ ոչ էր Սուրբ Հոգի. կամ թէ՝ յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ եւ կամ զՍուրբ Հոգին. եւ թէ՝ փոփոխելիք են կամ այլայլելիք, զայնպիսիսն նզովէ Կաթուղիկէ եւ Առաքելական սուրբ Եկեղեցի։

Ի Սրբոյ Ղուսաւորչէն մերմէ ասացեալ։

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ

քան զյաւիտեանս, երկիրպագանելով Սրբոյ Երրորդութեանն և միոյ Աստուածութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։



Զսուրբ կոյսն թռուցեալ յօդս եւ
ամպեղէն կառօքն ի վեր համբարձեալ։

ԱՂՕԹՔ
ԵՐԵԿՈՅԵԱՆ

ԱՌԱՔԵԱ՛, Տէր, զլոյս քո և զճըշմարտութիւն քո, զի առաջնորդեսցեն ինձ և հանցեն զիս ի լեառն սուրբ և ի յարկս քո։

Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ։

Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ, Աստուած Աստուած իմ։

Արդ՝ ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ Աստուած, խոստովանեա՛ նմա՝ Փրկիչ երեսաց իմոց Աստուած է։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք,
ընկալ կեցո՛ եւ ողորմեա։

Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ,
այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Եկեսցէ ի վերայ իմ ողորմութիւն քո, Տէր, և փրկութիւն քո ըստ բանի քում։

Տաց պատասխանի ոյք նախատեն զիս բանիւք, զի ես ի բանս քո յուսացայ։

Մի՛ ի բացեայ առներ ի բերանոյ իմմէ զբան ճշմարտութեան մինչև յոյժ, զի յիրաւունս քո յուսացայ։

Պահեցի զօրէնս քո յամենայն ժամ, յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից։

Գնայի ես յանդորրու, զի զպատուիրանս քո խնդրեցի։

Խօսէի զվկայութիւնս քո առաջի թագաւորաց, և ոչ ամաչէի։

Խորհէի ի պատուիրանս քո, զոր սիրեցի։

Համբարձի զձեռս իմ ի պատուիրանս քո զոր սիրեցի, և խորհէի յարդարութեան քում։

Ցիշեա զբան ծառայի քո, յոր և յուսացուցեր զիս։

Սա մխիթարեսցէ զիս ի խոնարհութեան իմում, զի բան քո կեցոյց զիս։

Ամբարտաւանք անիրաւեցան յիս յոյժ, այլ յօրինաց քո ես ոչ խոտորեցայ։

Ցիշեցի զիրաւունս քո յաւիտենից, Տէր, և մխիթարեցայ։

Տրտմութիւն կալաւ զիս ի մեղաւորաց, և ոյք թողին զօրէնս քո։

Գովելի են ինձ իրաւունք քո ի տեղւոջ պանդխտութեան իմոյ։

Ցիշեցի ի գիշերի զանուն քո, Տէր, և պահեցի զօրէնս քո։

Սա եղև ինձ ճանապարհ ի կեանս, զի զարդարութիւնս քո խնդրեցի։

Զանօրէնս ատեցի, և զօրէնս քո սիրեցի։

Օգնական և Փրկիչ իմ ես դու, և ես ի բանս քո յուսացայ։

Ի բաց եղերուք յինէն չարք, և քննեցից զպատուիրանս Աստուծոյ իմոյ։

Օգնեա ինձ ըստ բանի քում, և կեցո զիս, և մի՛ յամօթ առներ զիս ի յուսոյ իմմէ։

Օգնեա ինձ և ապրեցո զիս, և խորհեցայց յիրաւունս քո յամենայն ժամ։

Անարգեցեր զամենեսեան որք ապըստամբ եղեն յարդարութեանց քոց, զի անիրաւութեամբ էին խորհուրդք նոցա։

Ցանցաւորս համարեցայ զամենայն մե-

զաւորս երկրի, վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո։

Բևեռեա ընդ երկիւղ քո զմարմին իմ, զի ի դատաստանաց քոց երկեայց յոյժ։

Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո, Տէր, ըստ բանի քում իմաստուն արա զիս։

Մտցեն աղօթք իմ առաջի քո, Տէր, և բանիւ քով փրկեա զիս։

Բղխեսցեն շրթունք իմ՝ զօրհնութիւնս քո, յորժամ ուսուցես ինձ զարդարութիւնս քո։

Խօսեսցի լեզու իմ զբանս քո, զի ամենայն պատուիրանք քո արդարութեամբ են։

Եղիցի ձեռն քո ի կեցուցանել զիս, զի զպատուիրանս քո ընտրեցի։

Ցանկացայ փրկութեան քում, Տէր, և օրէնք քո խօսք իմ էին։

Կեցցէ անձն իմ օրհնեսցէ զքեզ, և իրաւունք քո օգնեսցեն ինձ։

Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ. խնդրեա զծառայս քո զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ։

Մի՛ եկեսցեն ի վերայ մեր ոտք ամբար-

տաւանից, և ձեռք մեղաւորաց մի դողա-
ցուսցեն զմեզ։

Անդ անկցին ամենեքեան ոյք գործեն
զանօրէնութիւն. մերժեսցին և այլ մի՛ կա-
րասցեն հաստատիլ։

Ես ի Տէր յուսացայ, ցնծացայց եւ ու-
րախ եղէց յԱստուած փրկիչ իմ։

Տէր, Տէր ետ ինձ զօրութիւն, եւ կա-
ցոյց զոտս իմ ի հաստատութեան, ի վերայ
պարանոցի թշնամւոյն կացոյց զիս, և հան-
գոյց զիս երագ երագ։

Որ բնակեալն է յօգնութիւն բարձրե-
լոյն, ընդ հովանեաւ Աստուծոյ յերկինս
հանգիցէ։

Ասասցէ Տեառն՝ ընդունող իմ ես դու,
ապաւէն իմ Աստուած, և ես յուսամ ի նա։

Նա փրկեսցէ զիս յորոգայթէ որսողին,
և ի բանից ի խռովութենէ։

Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ, և ի
հովանի թևոց նորա յուսասցիս։

Որպէս զէն շուրջ եղիցի զքև ճշմար-
տութիւն նորա։

Ոչ երկիցես դու յերկիւղէ գիշերի, եւ
ոչ ի նետէ որ թռչի ի տուէ։

Ցիրէ որ չրջի ի խաւարի, ի գայթակղութենէ դիւին ի հասարակ աւուր։

Անկցին ի կողմանէ քումմէ հազարք, և բիւրք ընդ աջմէ քումմէ, և առ քեզ ինչ ոչ մերձեսցին։

Բայց միայն աչօք քովք հայեսցիս դու, և զհատուցումն մեղաւորաց տեսցես, զի դու, Տէր, յոյս իմ ես։

Զբարձրեալն արարեր քեզ ապաւէն, զի ոչ հասցեն առ քեզ չարք, և տանջանք մի՛ մերձեսցին ի յարկս քո։

Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո, ի պահել զքեզ յամենայն ճանապարհս քո։

Ի բազուկս իւրեանց ընկալցին զքեզ, զի մի՛ երբեք հարցես զքարի զոտն քո։

Ի վերայ իժից և քարբից գնասցես դու, և առ ոտն կոխեսցես զառիւծն և զվիշապն։

Քանզի յիս յուսացաւ, և փրկեցից զնա. հովանի եղէց նմա, զի ծանեաւ զանուն իմ։

Կարդասցէ առ իս, և ես լուայց նմա, և առ նմա եղէց ի նեղութեան։

Փրկեցից և փառաւոր արարից զնա, երկայն աւուրբք լցուցից, և ցուցից նմա ըզփրկութիւն իմ։

Առ քեզ, Տէր, համբարձի զաչս իմ, որ բնակեալդ ես ի յերկինս։

Որպէս աչք ծառայի ի ձեռն Տեառն իւրոյ, և որպէս աչք աղախնոյ ի ձեռն տիկնոջ իւրոյ։

Այնպէս են աչք մեր առ քեզ, Տէր Աստուած մեր, մինչև ողորմեսցիս ի վերայ մեր։

Ողորմեա մեզ, Տէր, ողորմեա մեզ, զի բազում լցաք արհամարհանօք։

Եւս առաւել լցան անձինք մեր նախատանօք, որք նախատէին զմեզ, և արհամարհանօք ամբարտաւանից։

Աստուած, յանուան քում կեցո զիս, և ի զօրութեան քում իրաւ արա ինձ։

Աստուած, լուր աղօթից իմոց, ունկն դիր բանից բերանոյ իմոյ։

Օտարք յարեան ի վերայ իմ, և հզօրք խնդրեցին զանձն իմ, և ոչ համարեցան զքեզ Աստուած առաջի իւրեանց։

Ահա Աստուած օգնական իմ, և Տէր ընդունող հոգւոյ իմոյ։

Ի դարձուցանել զչարն ի թշնամիսն իմ, ճշմարտութեամբ քով սատակեա զնոսա։

Ես կամօք իմովք պատարագս մատուցից քեզ, և խոստովան եղէց անուան քում, Տէր, զի բարի է։

Ցամենայն նեղութենէ իմմէ փրկեցեր զիս. և ի թշնամիս իմ ետես ակն իմ։

Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց, գովեալ եւ առաւել բարձրացեալ անուն քո յաւիտեան։

Եւ օրհնեալ է անուն սուրբ փառաց քոց, գովեալ և առաւել բարձրացեալ անուն քո յաւիտեան։

Օրհնեալ ես ի տաճարի փառաց սրբութեան քո, գովեալ և առաւել բարձրացեալ անուն քո յաւիտեան։

Օրհնեալ ես ի վերայ աթոռոյ արքայութեան քո, գովեալ և առաւել բարձրացեալ անուն քո յաւիտեան։

Օրհնեալ ես որ նստիս ի քրովբէս և հայիս յանդունդս, գովեալ և առաւել բարձրացեալ անուն քո յաւիտեան։

Օրհնեալ ես ի վերայ հաստատութեան երկնից, գովեալ և առաւել բարձրացեալ անուն քո յաւիտեան։

Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան նո-

ըա, օրհնեցէք զնա ի հաստատութեան ի զօրութեան նորա։

Օրհնեցէք զնա ի զօրութեան նորա, օրհնեցէք զնա ի բազում մեծութեան նորա։

Օրհնեցէք զնա ի ձայն օրհնութեան, օրհնեցէք զնա սաղմոսիւք և օրհնութեամբ։

Օրհնեցէք զնա ցնութեամբ, գովեցէք զնա ուրախութեամբ։

Օրհնեցէք զնա ի բանս քաղցր, գովեցէք զնա ի բարբառ լսելիս։

Օրհնեցէք զնա ի ձայն գոհութեան, ամենայն հոգիք օրհնեցէք զՏէր։

Արդ արձակեա՛ զծառայս քո Տէր, ըստ բանի քում ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ զփրկութիւն քո զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց։

Լոյս յայտնեցար հեթանոսաց, և փառք ժողովրդեան քում Իսրայելի։

Զգեցեր զձեռն քո՝ և փրկեաց զիս աջ քո, և Տէր հատուսցէ ընդ իմ։

Տէր, ողորմութիւն քո յաւիտեան, ըզգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ։

Տէր, հան ի բանտէ զանձն իմ, գոհանամ զանուանէ քումմէ։

Եւ քեզ սպասեն արդարքն մինչև հատուսցես։

Մեծացուսցէ անձն իմ զՏէր և ցնծասցէ հոգի իմ Աստուծով փրկչաւ իմով։

Այց արար ի վերայ խոնարհութեան աղախնոյ իւրոյ, այսուհետև երանիցեն ինձ ամենայն ազգք։

Արար ընդ իս մեծամեծս հզօրն, եւ սուրբ է անուն նորա։

Ողորմութիւն արար ազգաց յազգս երկիւղածաց իւրոց, և արար զօրութիւն բազկաւ իւրով։

Ցրուեաց զամբարտաւանս ի մտաց սրտից, և քակեաց զհզօրս յաթոռոց։

Զխոնարհս բարձրացոյց, զկարօտս ելից բարութեամբ, և զմեծատունս արձակեաց ունայնս։

Պաշտպանեաց Իսրայելի ծառայի իւրոյ, յիշելով զողորմութիւն իւր։

Որպէս խօսեցաւ առ հարսն մեր, ընդ Աբրահամու և զաւակի նորա յաւիտեան։

Տուր զօրութիւն ծառայի քո, կեցո զորդի աղախնոյ քո, և արա առ իս նշան բարութեան։

Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն, զի դու Տէր, օգնեցեր ինձ և մխիթարեցեր զիս։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

ՄԱՂԹԱՆՔ

Անձն իմ ի ձեռս քո է յամենայն ժամ, եւ ի սուրբ Խաչ քո յուսացեալ եմ թագաւոր երկնաւոր, զբազմութիւն սրբոց քոց բարեխօս ունիմ առ քեզ, որ երկայնամիտդ ես առ ամենեսեան, մի՛ անտես առներ զապաւինեալս ի քեզ, այլ պահեա պատուական եւ սուրբ Խաչիւ քով ի խաղաղութեան։

ՔԱՐՈԶ

Աղաչեսցուք զամենակալն Աստուած եւ խնդրեսցուք ի նմանէ, զի առաքեսցէ զհրեշտակ խաղաղութեան, որ եկեալ պահեսցէ զմեզ յերկիւղական գիշերիս, ի դիւական խռովութենէ, ամբողջ պահելով զհոգի եւ զմարմին մեր մինչեւ ի կատարումն ժամանակի ամաց մերոց. ամենակալ Տէր Աստուած մեր կեցո եւ ողորմեա։

Զհանգիստ գիշերիս խաղաղութեամբ անցուցանել հաւատով ի Տեառնէ խնդրեսցուք։

Զհրեշտակ խաղաղութեան պահապան անձանց մերոց ի Տեառնէ խնդրեսցուք։

Զքաւութիւն եւ զթողութիւն յանցանաց մերոց ի Տեառնէ խնդրեսցուք։

Զսրբոյ Խաչին մեծ եւ կարող զօրութիւն՝ յօգնութիւն անձանց մերոց ի Տեառնէ խնդրեսցուք։

Եւ եւս միաբան վասն ճշմարիտ եւ սուրբ հաւատոյս մերոյ զՏէր աղաչեսցուք։

Զանձինս մեր եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք։

Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ։

ԱՂՕԹՔ

Տէր Աստուած մեր, դու պահեա զմեզ խաղաղութեամբ ի գիշերիս յայսմիկ եւ յամենայն ժամանակի։ Ընդ սուրբ երկիւղ քո բեւեռեալ պահեա զմիտս և զխորհուրդս մեր, որպէս զի յամենայն ժամ քեւ պահպանեալ լիցուք յորոգայթից թշնամւոյն,

և քեզ հանցուք զօրհնութիւն և զփառս Հօր և Որդւոյ և Հոգւոյդ Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն,
Աստուծոյ երկիրպագեսցուք։

Հրեշտակի խաղաղութեան յանձն արա զանձինս մեր Տէր զօրութեանց, որ եկեալ պահեսցէ զմեզ անխռովս ի տուէ և ի գիշերի, յարթնութեան և ի հանգստեան մերում. զի դու ես արարիչ լուսոյ և հաստիչ գիշերի։ Եւ այժմ աղաչեմք զքեզ, Տէր Աստուած մեր, զհանգիստ գիշերիս շնորհեա խաղաղութեամբ անցուցանել, և հասանիլ ի պաշտօն առաւօտու յերկրպագութիւն և ի փառաբանութիւն ամենասուրբ Երրորդութեանդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

ՍԱՂՄՈՍ

Խաղաղութեամբ յայս և ի սոյն ննջեցուք և զարթիցուք, զի դու, Տէր, միայն առանձին յուսով քով բնակեցուցեր զմեզ։

Ի կարդալ իմում լուար ինձ Աստուած, ըստ արդարութեան, ի նեղութենէ ինձ անդորը արարեր, ողորմեա ինձ և լուր աղօթից իմոց։

Որդիք մարդկան՝ մինչև յե՞րբ էք խըստասիրտք, ընդէ՞ր սիրէք զնանրութիւն, և խնդրէք զստութիւն։

Ծաներուք զի սքանչելիս արար Տէր սրբոյ իւրում, և Տէր լուիցէ ինձ ի կարդալ իմում առ նա։

Բարկանայք՝ և մի՛ մեղանչէք. զոր ինչ ասէք ի սիրտս ձեր՝ յանկողինս ձեր զղջացարուք։

Մատուցէք պատարագս արդարութեան, և յուսացարուք ի Տէր։

Բազումք ասէին թէ ո՛ ցուցցէ մեզ ըզբարութիւն Տեառն. նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց, և ետուր ուրախութիւն սրտից մերոց։

Ի պտղոյ ցորենոյ, գինւոյ և ձիթոյ իւրեանց լցուցեր զնոսա։

Խաղաղութեամբ յայս և ի սոյն ննջեսցուք և զարթիցուք, զի դու, Տէր, միայն առանձին յուսով քով բնակեցուցեր զմեզ։

Ալէլուիա Օրթի։
Խաղաղութիւն ամենեցուն։
Եւ ընդ հոգւոյդ քում։
Երկիւղածութեամբ լուարուք։
Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի,
որ ըստ Յովհաննու։
Փառք քեզ Տէր Աստուած մեր։
Պռօսխումէ։
Ասէ Աստուած։
Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ո՛չ հատն ցորենոյ անկեալ յերկի մեռանիցի, ինքն միայն կայ։ Ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ։ Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ զնա. և որ ատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ, ի կեանս յաւիտենականս պահեսցէ զնա։ Եթէ ոք զիս պաշտեսցէ, զկնի իմ եկեսցէ, եւ որ եսն եմ, անդ եւ պաշտօնեայն իմ եղիցի։ Եթէ ոք զիս պաշտիցէ, պատուեսցէ զնա Հայր իմ։
Փառք քեզ Տէր Աստուած մեր։

ՔԱՐՈԶ

Սուրբ Խաչիս աղաչեսցուք զՏէր՝ զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց, և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ. ամենակալ Տէր Աստուած մեր կեցո և ողորմեա։

ԱՂՕԹՔ

Պահպանեա՛ զմեզ, Քրիստոս Աստուած մեր, ընդ հովանեաւ սուրբ և պատուական խաչի քո ի խաղաղութեան. փրկեա՛ յերեւելի և յաներեւոյթ թշնամւոյն։ Արժանաւորեա՛ զոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ Սրբոյ Հոգւոյդ։ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. Ամէն։

Հա՛յր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո։ Եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր։ Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց։ Եւ մի՛

տանիր զմեզ ի փորձութիւն. այլ փրկեա՛ զմեզ ի չարէ։ Զի քո է արքայութիւն, և զօրութիւն, և փառք յաւիտեանս. Ամէն։

ՄԱՂԹԱՆՔ

Անկանիմք առաջի քո սուրբ Աստուածածին, և աղաչեմք զանարատ զկոյսդ. բարեխօսեա՛ վասն անձանց մերոց և աղաչեա՛ զմիածին Որդիդ փրկել զմեզ ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց։

Որ արձակիչդ ես կապելոց՝ պարգևատու ամենեցուն, այսօր հայցմամբ ծերունւոյն՝ արձակեա և զիս զբաղմամեղս ի կապանաց մահու ի կեանսն յաւիտենից։



ՄԱՂԹԱՆՔ

ԸՆԴԴԷՄ ԱՐՀԱՒՐԱՑ ԳԻՇԵՐԱՑՆՈՑ

ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՅ — ԲԱՆ ԺԲ.

Ընկալ քաղցրութեամբ՝ Տէր Աստուած հզօր, զդառնացողիս զաղաչանս, մատի՛ր գթութեամբ առ պատկառեալս դիմօք. փարատեա՛, ամենապարգե՛ւ, զամօթական տխրութիւնս. բա՛րձ յինէն, ողորմա՛ծ, զանբերելի ծանրութիւնս. անջրպետեա՛, հնարաւո՛ր, զմահացու կրթութիւնս, աւարեա՛, մի՛շտ յաղթող, զխաբողին հաճութիւնս. բացադրեա՛, վերնայի՛ն, զմոլելոյն մառախուղ. կնքեա՛, կեցուցի՛չ, զկորուսչին ընթացմունս. ցրուեա՛, ծածկատե՛ս, զըմբռնողին չար գտմունս. խորտակեա՛, անքննի՛ն, զմարտողին դիմեցմունս։ Տեառնագրեա՛ քո անուամբդ ըզլուսանցոյց երդ յարկիս. պարփակեա՛ քո ձեռամբդ զառաստաղ տաճարիս. գծագրեա՛ քո արեամբդ զմուտ սեմոց սենեկիս. կերպացո՛ զքո նշանդ ի հետս ելից մաղ-

թողիս. ամրացո՛ քո աջովդ զհանգստեանս խշտիս. մաքրեսցե՛ս ի հաղբից զծածկաբան անկողնոյս. պահեսցե՛ս քո կամօքդ զտառապեալ անձն հոգւոյս. անխարդախ արասցե՛ս զքո շնորհեալ շունչ մարմնոյս. կացուսցե՛ս շրջափակ զպար զօրուդ երկնայնոյ. կարգեսցեա՛ ի դիմի ընդդէմ դիւացն դասու։ Տո՛ւր հանգիստ բերկրութեան՝ մահահանգոյնս նիրհման ի խորութեան գիշերիս, բարեխօսութեամբ հայցուածոց սրբուհոյ Աստուածածնիդ և ամենայն ընտրելոց։ Ամփոփեալ պարուրեա՛ զպատուհան տեսութեանց զգայարանացս իմաստից՝ անզարհուրելի զետեղմամբ, ի ծփական խռովութեանց՝ կենցաղական ըզբաղմանց, անրջական երազոց, խօլականաց ցնորից, յիշատակաւ քո յուսոյդ անշնաստելի պաշտպանեալ։ Եւ սթափեալ վերըստին ի ննջմանէ ծանրութեան ամենազգաստ արթնութեամբ՝ հոգենորոգ զուարթութեամբ, ի քեզ արձանացեալ զայս ձայն մաղթանաց բուրմամբ հաւատոց, քեզ՝ ամենօրհնեալ թագաւո՛ր փառաց, անճառից փառաբանողաց երկնագումար խմբից եր-

գակցեալ՝ յերկինս առաքել։ Զի դու փա-
ռաւորեալ ես յամենայն արարածոց յաւի-
տեանս յաւիտենից. Ամէն։

ՄԱՂԹԱՆՔ

ԱՌ ՈՐԴԻՆ ԱՍՏՈՒԱԾ

ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅ — ԲԱՆ ԽԱ.

Որդի՛ Աստուծոյ կենդանւոյ՝ օրհնեալդ
յամենայնի, Հօրդ ահաւորի անքնին ծը-
նունդ, որ տկարանայ առ ի քէն և ոչ ինչ.
որ ի ծագել անստուեր նշուլից ողորմու-
թեան քո փառաց՝ հալին մեղք, հալածին
դևք, ջնջին յանցանք, խզին կապանք,
խորտակին շղթայք, կենդանածնին մահաց-
եալք, բժշկին հարուածք, ողջանան վէրք,
բառնին ապականութիւնք, տեղի տան տըխ-
րութիւնք, նահանջին հեծութիւնք, փախ-
նու խաւարն, մեկնի մէգն, մերժի մառա-
խուղն, փարատի մռայլն, սպառի աղջա-
մուղջն, վերանայ մութն, գնայ գիշերն,
տարագրի տագնապն, չքանան չարիքն,

հալածին յուսահատութիւնք, և թագաւորէ ձեռն քո ամենակար քաւի՛չդ, ամենայնի։

Որ ո՛չ եկիր կորուսանել զմարդկան ոգիս, այլ կեցուցանել. թո՛ղ ինձ զանթիւ չարիսն իմ բազում ողորմութեամբդ. զի դու միայն ես յերկնի անճառ, և յերկրի անզննին, ի տարր գոյի, և յեզերս ծագաց աշխարհի, սկիզբն ամենայնի և յամենայնի. ամենայն լրմամբ օրհնեալ ի բարձունս, և քեզ ընդ Հօր և Հոգւոյդ Սրբոյ վայելէ փառք յաւիտեանս. Ամէն։

ՄԱՂԹԱՆՔ

Ի ԴԻՒԱՑ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ

ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՅ — ԲԱՆ ՂԴ.

Աստուա՛ծ յաւիտենական, բարերա՛ր և ամենակա՛լ, ստեղծիչ լուսոյ եւ յօրինի՛չ գիշերոյ, կեա՛նք ի մահու, և լո՛յս ի խաւարի, յո՛յս ակն ունողաց, և երկայնմտութի՛ւն տարակուսելոց. որ ամենարուեստ իմաստութեամբ քո դարձուցանես յայդ

զստուերս մահու, աննուա՛զ ծագումն եւ անմուտ արեգակն, քանզի ո՛չ զօրէ ծածկել զփառս տէրութեան քո խաւար գիշերոյ. որում կրկնի ծունր երկրպագութեան ամենայն եղելոց երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց. որ լսես ըզհեծութիւն կապելոց, եւ հայիս յաղօթս խոնարհաց, և ընդունիս զխնդրուածս նոցա, Աստուած իմ և թագաւոր իմ, կեա՛նք իմ և ապաւէն իմ, յո՛յս իմ և վստահութիւն իմ, Յիսուս Քրիստոս՝ Աստուածդ ամենայնի, սո՛ւրբդ՝ հանգուցեալ ի հոգիս սրբոց, մխիթարութի՛ւն վշտաց և քաւարա՛ն մեղուցելոց. որ գիտես զամենայն յառաջ քան զլինել նոցա. առաքեա՛ ըզպահպանողական զօրութիւն աջոյ քո, եւ փրկեա՛ զիս յերկիւղէ գիշերի եւ ի դիւէ չարէ։ Որպէս զի զյիշատակ սոսկալի եւ սուրբ քո անուանդ միշտ համբուրեալ շրթամբք հոգւոյ՝ ըղձութեան շնչոյ, կեցից պահպանեալ ընդ այնոսիկ՝ որ կարդան ըզքեզ ի բոլոր սրտէ։

Եւ ի դրոշմէ Խաչի քոյոյ նշանիդ, զոր Աստուածային արեամբ քո ներկեալ նորո-

գեցեր, և ի նոյն շնորհ որդեգրութեան՝ ըզ-
մեզ մկրտեցեր, և ի փառս պատկերի քո
նկարեալ յօրինեցեր. այսու պարգևօք աս-
տուածականօք ամաչեսցէ՛ սատանայ, քակ-
տեսցի՛ն մեքենայքն, բարձցին որոգայթքն,
պարտեսցի՛ն մարտուցեալքն, պակասես-
ցի՛ն զէնքն սայրասուրք, մերժեսցի՛ն մէգն,
փարատեսցի՛ խաւարն, մեկնեսցի՛ մառա-
խուղն։ Բազուկ քո հովանասցի, և ա՛ջ քո
կնքեսցէ. վասնզի գթած ես և ողորմած,
և անուն քո կոչեցեալ է ի վերայ ծառա-
յից քոց։ Եւ քեզ ընդ Հօր Հոգւովդ Սըր-
բով՝ փա՛ռք իշխանութիւն և պատիւ յա-
ւիտեանս յաւիտենից. Ամէն։

ԽՆԴՐՈՒԱԾՔ

ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅ — ԲԱՆ ԾԷ.

Քրիստո՛ս Աստուած, անո՛ւն ահաւոր, մեծութեան տեսակ, անքնին բարձրութեան պատկեր, անսահման զօրութիւն, կերպարա՛ն փրկութեան լուսոյ, պաշտպա՛ն կենաց, դուռն արքայութեան՝ վերնում հանգստեանն, ճանապա՛րհ հանդարտութեան, ապաւինութի՛ւն՝ նորոգ և անտըխրական երանութեան, ամենակա՛լ ինքնիշխանութի՛ւն՝ բոլոր էականութեան, օրհնութեան կոչումն, աւետեաց ձայն, բերկրութեան բարբառ, անմահութեան դեղ, որդի՛ անճառ՝ Աստուծոյ միոյ, որ ինձ անհընարին է, քեզ դիւրին է. որ ինձ անհասն է, քեզ սահմանեալ է. որ ինձ անանցն է, քեզ հպաւոր է. որ եղկելոյս ինձ ծածկեցեալն է, քումդ երանութեան մերձաւոր է. որ ինձ անկարելին է, քեզ կատարեալ է. որ ինձ անկշռելին է, քումդ անճառութեան չափեալ է. որ ինձ յուսահատութեանն է, քեզ սփոփանաց է. որ ինձ անբժշկականն է, քեզ անվտանգելի

է. որ ինձ հեծութեանն է, քեզ խնդութեան է. որ ինձ ծանունք են, քեզ թեթևագոյնք են. որ ինձ եղծեալն է, քումդ զօրեղութեան գրեցեալ է. որ ինձ կորուսեալն է, քեզ ըմբռնեալ է. որ ինձ անճառն է, քեզ համարեալ է. որ ինձ մռայլն է, քեզ ճառագայթ է. որ ինձ անթիւն է, օրհնեալդ քում ձեռին բովանդակեալ է. որ ինձ սոսկալին է, քեզ հեշտալի է. որ ինձ փախչելին է, քեզ վանելի է. որ ինձ անմատոյցն է, քեզ դիւրահերքելի է. որ ինձ մահաբերն է, քումդ էականութեան զօրութեան՝ ընդ ոչ գոյսն համարեալ է։

Այլ դո՛ւ, ողորմած Աստուած բոլորից՝ Տէ՛ր Յիսուս Քրիստոս, և այսմ զօրես առ ելիցն հնար՝ եթէ գթասցիս. վասն անուան փառաց մեծութեան Հօր քո օրհնելոյ, վասն կամաց գթութեան Հոգւոյդ քո Սրբոյ՝ տե՛ս ի տաժանաւորս կրից յանդիմանական յայտնութիւն, և ի խորոց սրտիս ինքնամատոյց դատախազութիւն. նայեա՛ ի բնութեանս ամենապատաղ խակութիւն, և պարգևեա՛ բժշկութիւն վիրացս և հնարաւորութիւն կորստեանս, զերծումն բազմամանեայ մա-

հուս և չաւիղ կենաց ապականելոյս, նո-
բոգութիւն եղծմանս և մուտք յուսոյ ամ-
բարշտելոյս։ Եթէ ես զաննմանն ինձ կամս
ցուցի, ո՞րչափ առաւել դու զբնաւորա-
կանդ քո զընտանի բարերարութիւնդ.
եթէ ի փչոց պտուղ ընծայեցաւ քաղցրու-
թեան, ո՞րչափ ևս առաւել ի ծառոյդ կե-
նաց՝ ճաշակ անմահութեան. եթէ ես իմոց
ատելեաց ողորմութիւն մաղթեցի, դու
քոյոյս զի՞րդ ոչ կրկին մատուսցես,
հզօ՞ր, յաննուազ առատութենէդ։

Արդ՝ տե՛ս ի քոյդ մեծութիւն, բարձ-
րեա՛լ, նայեցեալ ի յիմս փոքրկութիւն.
ընկա՛լ զսակաւ խոստովանութիւնս անհա-
մար մեղացս՝ որ զբնաւն համայն տեսա-
նես. և որպէս զվիմին գթել ոչ գրեցեր,
և զաւազոյս փոքու սասանել մի՛ համա-
րեսցես. և իբրև զԴաւթին ընդ մեղայն ա-
սել՝ իսկոյն անցուցեր զպատիժ պարտուցն,
և առ իմ ձայնիս հեծութիւն՝ զնոյն գոր-
ծեսցես երկայնմտութիւն. որ տաս ամե-
նեցուն առատապէս անաչառութեամբ, որ-
պէս յաղթող բարի բազմիմաստ, և ոչ նա-
խատես զյետնեալ ստրուկս։ Որպէս ողոր-

մած և ամենաստեղծ, ստացի՛ր վերստին և մի՛ կորուսաներ զբուժեալս արեամբ քո, և զբուծեալս ստեամբ քո, գթա՛ծ։ Զի քո է փրկութիւն, և ի քէն է քաւութիւն. և քեզ վայել է փա՞ռք յամենայնի յաւիտեանս. Ամէն։

ԱՂՕԹՔ

ԻՐԱՔԱՆՉԻՒՐ ԱՆՁԻՆ ՀԱՒԱՏԱՑԵԼՈՅ Ի ՔՐԻՍՏՈՍ

Հաւատով խոստովանիմ և երկիրպագանեմ քեզ՝ Հայր և Որդի և Սուրբ Հոգի, անեղ և անմահ բնութիւն, արարիչ հրեշտակաց և մարդկան և ամենայն եղելոց. և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս։

Հաւատով խոստովանիմ և երկիրպագանեմ քեզ՝ անբաժանելի լոյս, միասնական սուրբ Երրորդութիւն և մի Աստուածութիւն. արարիչ լուսոյ և հալածիչ խաւարի, հալածեա ի հոգւոյ իմմէ զխաւար

մեղաց և անգիտութեան, և լուսաւորեա զմիտս իմ ի ժամուս յայսմիկ աղօթել քեզ ի հաճոյս և ընդունել ի քէն զխնդրուածս իմ. և ողորմեա։

Հայր երկնաւոր Աստուած ճշմարիտ՝ որ առաքեցեր զՈրդիդ քո սիրելի ի խնդիր մոլորեալ ոչխարին. մեղայ յերկինս և առաջի քո. ընկալ զիս որպէս զանառակ որդին և զգեցո ինձ զպատմուճանն զառաջին զոր մերկացայ մեղօք. և ողորմեա։

Որդի Աստուծոյ Աստուած ճշմարիտ՝ որ խոնարհեցար ի հայրական ծոցոյ և առեր մարմին ի սրբոյ կուսէն Մարիամայ վասն մերոյ փրկութեան. խաչեցար, թաղեցար և յարեար ի մեռելոց՝ և համբարձար փառօք առ Հայր. մեղայ յերկինս և առաջի քո. յիշեա զիս որպէս զաւազակն յորժամ գաս արքայութեամբ քով. և ողորմեա։

Հոգի Աստուծոյ Աստուած ճշմարիտ՝ որ իջեր ի Յորդանան և ի վերնատունն եւ լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ աւազանին, մեղայ յերկինս և առաջի քո. մաքրեա զիս վերստին Աստուածային հրով քով՝ որպէս հրեղէն լեզուօք սուրբ զԱռաք-

եալսն, և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս։

Անեղ բնութիւն՝ մեղայ քեզ մտօք իմովք, հոգւով և մարմնով իմով. մի՛ յիշեր զմեղս իմ զառաջինս վասն անուանդ քում սրբոյ. և ողորմեա։

Տեսող ամենայնի, մեղայ քեզ խորհրդով, բանիւ և գործով. ջնջեա զձեռագիր յանցանաց իմոց, և գրեա զանուն իմ ի դպրութեան կենաց. և ողորմեա։

Քննող գաղտնեաց, մեղայ քեզ կամայ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ. թողութիւն շնորհեա մեղաւորիս, զի ի ծննդենէ սուրբ աւազանին մինչև ցայսօր մեղուցեալ եմ առաջի Աստուածութեանդ քո զգայարանօք իմովք և ամենայն անդամօք մարմնոյս. և ողոր։

Ամենախնամ Տէր, դիր պահապան աչաց իմոց զերկիւղ քո սուրբ՝ ոչ ևս հայիլ յայրատ, և ականջաց իմոց ոչ ախորժել լսել զբանս չարութեան, և բերանոյ իմոյ ոչ խօսիլ զստութիւն, և սրտի իմոյ ոչ խորհել զչարութիւն, և ձեռաց իմոց ոչ գործել զանիրաւութիւն, և ոտից իմոց

ոչ գնալ ի ճանապարհս անօրէնութեան. այլ ուղղեա զշարժումն սոցա լինիլ միշտ ըստ պատուիրանաց քոց յամենայնի. և ողորմեա։

Հուր կենդանի Քրիստոս, զհուր սիրոյ քո զոր արկեր յերկիր, բորբոքեա յանձն իմ. զի այրեսցէ զախտ հոգւոյ իմոյ, եւ սրբեսցէ զխիղճ մտաց իմոց, և մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ, և վառեսցէ զլոյս գիտութեան քո ի սրտի իմում. և ողոր։

Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն զբարիս խորհել և խօսել և գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց՝ ի բանից և ի գործոց փրկեա զիս. և ողորմեա։

Կամեցող բարեաց Տէր կամարար, մի՛ թողուր զիս ի կամս անձին իմոյ գնալ, այլ առաջնորդեա ինձ լինել միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց. և ողորմեա։

Արքայ երկնաւոր, տուր ինձ զարքայութիւն քո զոր խոստացար սիրելեաց քոց. եւ զօրացո զսիրտ իմ ատել զմեղս, և սիրել զքեզ միայն, և առնել զկամս քո. և ողորմեա։

Խնամող արարածոց, պահեա նշանաւ Խաչի քո զհոգի և զմարմին իմ ի պատրանաց մեղաց, ի փորձութեանց դիւաց, և ի մարդոց անիրաւաց, և յամենայն վտանգից հոգւոյ և մարմնոյ. և ողորմեա։

Պահապան ամենայնի Քրիստոս, աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ և ի գիշերի, ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ, ի ննջել և ի յառնել, զի մի երբեք սասանեցայց. և ողորմեա։

Աստուած իմ, որ բանաս զձեռն քո և լնուս զամենայն արարածս ողորմութեամբ քով. քեզ յանձն առնեմ զանձն իմ. դու հոգա և պատրաստեա զպէտս հոգւոյ եւ մարմնոյ իմոյ յայսմհետէ մինչև յաւիտեան. և ողորմեա։

Դարձուցիչ մոլորելոց, դարձո զիս ի չար սովորութեանց իմոց ի բարի սովորութիւն, և բևեռեա ի հոգի իմ զսոսկալի օր մահուն և զերկիւղ գեհենոյն և զսէր արքայութեանն. զի զղջացայց ի մեղաց եւ գործեցից զարդարութիւն. և ողորմեա։

Աղբիւր անմահութեան, աղբերացո ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարութեան

որպէս պոռնկին՝ զի լուացից զմեղս անձին իմոյ յառաջ քան զելանելն իմ յաշխարհէս. և ողորմեա։

Պարգևիչ ողորմութեան, պարգևեա՛ ինձ ուղղափառ հաւատով և բարի գործով, և սուրբ մարմնոյ և արեան քո հաղորդութեամբ գալ առ քեզ. և ողոր։

Բարերար Տէր, հրեշտակի բարւոյ յանձն արասցես զիս, քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ, և անխռով անցուցանել ընդ չարութիւն այսոցն՝ որք են ի ներքոյ երկնից. և ողորմեա։

Լոյս ճշմարիտ Քրիստոս, արժանաւորեա զհոգի իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց քոց ի կոչման աւուրն. և հանգչիլ յուսով բարեաց յօթևանս արդարոց մինչև յօր մեծի գալստեան քո. և ողորմեա։

Դատաւոր արդար, յորժամ գաս փառօք Հօր՝ դատել զկենդանիս և զմեռեալս, մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայի քում. այլ փրկեա զիս ի յաւիտենական հրոյն, և լսելի արա ինձ զերանաւէտ

կոչումն արդարոց յերկնից արքայութիւնդ. և ողորմեա։

Ամենողորմ Տէր, ողորմեա ամենայն հաւատացելոց ի քեզ, իմոց եւ օտարաց, ծանօթից եւ անծանօթից, կենդանեաց եւ մեռելոց. շնորհեա եւ թշնամեաց իմոց եւ ատելեաց զթողութիւն որ առիս յանցանացն, եւ դարձո զնոսա ի չարեացն զոր ունին վասն իմ, զի ողորմութեանդ քում արժանի եղիցին. եւ ողորմեա։

Փառաւորեալ Տէր, ընկալ զաղաչանս ծառայիս քո, եւ կատարեա՛ ի բարի ըզխնդրուածս իմ՝ բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին, եւ Յովհաննու Մկրտչին, եւ սրբոյն Ստեփանոսի նախավկային եւ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին. եւ սրբոց Առաքելոց, Մարգարէից, Վարդապետաց, Մարտիրոսաց, Հայրապետաց, Ճգնաւորաց, Կուսանաց, Միանձանց, եւ ամենայն Սրբոց քոց երկնաւորաց եւ երկրաւորաց։ Եւ քեզ փառք եւ երկրպագութիւն անբաժանելի սուրբ Երրորդութեանդ՝ յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

ՄԱՂԹԱՆՔ

Վասն սրբուհւոյ Աստուածածնի բարեխօսութեանն, Տէր, ընկալ զաղաչանս մեր, եւ կեցո զմեզ։

ՔԱՐՈԶ

Սուրբ զԱստուածածինն եւ զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր ի յերկինս, զի կամեցեալ ողորմեսցի՝ եւ գԸթացեալ կեցուսցէ զարարածս իւր։ Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո եւ ողորմեա։

ԱՂՕԹՔ

Ընկալ, Տէր, զաղաչանս մեր՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին անարատ ծնողի միածնի Որդւոյ քոյ, եւ աղաչանօք ամենայն սրբոց քոց, եւ որոց այսօր է յիշատակ։ Լուր մեզ, Տէր, եւ ողորմեա, ներեա, քաւեա, եւ թող զմեղս մեր։ Արժանաւորեա զոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. Ամէն։

Հա՛յր մեր, որ յերկինս։

ՄԱՂԹԱՆՔ

Զհանգստեան զաղօթս եւ զաղաչանս՝ ընկալ մարդասէր Աստուած, ի հաճոյս բարերար կամաց քոց։ Մեր մեղաց եւ բազում յանցանացն թողութիւն շնորհեա, եւ քեզ փառք յաւիտեանս. Ամէն։

Փառք քեզ, Տէր Աստուած մեր, որ պարգեւեցեր զօրս զայս բարեաւ եւ խաղաղութեամբ անցուցանել։

Մարդասէր Աստուած, զառաջիկայ գիշերս որ ի վերայ մեր գալոց է՝ ի մեղաց փրկեա, ի չարեաց ազատեա, եւ ի գործս բարիս առաջնորդեա։

Առաւօտու օրհնութեանցն եւ փառաբանութեանցն արժանի արա զամենայն հաւատացեալս անուանդ քում սրբոյ, եւ պահեա ի խաղաղութեան։

Տէր Աստուած մեր՝ տուր զքո խաղաղութիւնդ ամենայն աշխարհի, բարձ զցասումն եւ զպատուհասն ի յարարածոց։

Ողորմեա հարց եւ եղբարց մերոց կենդանեաց եւ հանգուցելոց։

Ողորմեա զեկեղեցի չինողաց, երախ-

տաւորաց, պտղատուից, սպասաւորաց, եւ այնոցիկ՝ որք ընդ հովանեաւ սրբոյ եկեղեցւոյ են հանգուցեալ։

Տէր Աստուած՝ օգնեա թագաւորացն քրիստոնէից, եւ իշխանացն բարեպաշտից. զօրաց եւ զաւակաց նոցին՝ պահելով ի խաղաղութեան։

Տէր Աստուած մեր՝ պահեա զառաջնորդս եւ զեղբայրութիւնս մեր ամբողջ եւ անխռով ի կամս ողորմութեան քոյ։

Նշանաւ սուրբ եւ պատուական Խաչիւ քոյ՝ հալածեա զերեւելի եւ զաներեւոյթ թշնամին ի սահմանաց մերոց եւ ի բնակութենէս մերմէ։ Փրկեա զմեզ ի հրոյն յաւիտենից, եւ քեզ փառք յաւիտեանս. Ամէն։



ՊԱՂԱՏԱՆՔ
ԱՌ ՀՈԳԻՆ ՍՈՒՐԲ

Աղաչեմ զանփոփոխելի տէրութիւն ամենազօր Հոգւոյդ հզօրի. առաքեա՛ զցօղ քաղցրութեան քոյ, եւ բարեգործեա՛ ի յանձին եւ յիշխանական ազդման զգայութեան՝ զամենալից շնորհս բազմապարգեւ քո ողորմութեանդ։ Եւ հերկեա՛ զբանական անդաստան մարմնեղէն կարծրացեալ սրտիս, յընդունակութիւն արգասեաց հոգեւոր սերմանդ։ Քում ամենիմաստ էութեանդ խոստովանիմք զամենայն պարգեւս ի մեզ ծաղկեալ եւ աճեցեալ. որ ձեռնադրես Առաքեալս, լցուցանես Մարգարէս, ուսուցանես վարդապետս, բարբառեցուցանես համերս, և բանաս զփակեալ ականջս խլից. որպէս ազգակիցն քո՝ էակիցն Հօր՝ անդրանիկն Որդի՝ քոյին գործակցութեամբդ ներգործելով զայս ամենայն քարոզեաց զքեզ Աստուած հաւասարակից խոկութեանդ Հօր։ Շնորհեա՛ և ինձ մեղաւորիս խօսել համարձակութեամբ զկենդանարար խորհուրդ աւետեաց Աւետարանիդ. հետե-

ւել արագաթռիչ ընթացիւք մտաց՝ ընդ անհուն ասպարէզս քոյինս շունչ կտակարանաց։ Եւ ի մատչիլ իմ ի գլուխ հանդիսի մեկնութեան բանի, նա՛խ ժամանեսցէ առ իս գթութիւն քո. խօսելով յիս զարժանն և զպիտանիսն և զհաճոյսն քո ի ժամանակի. ի փառս և ի գովեստ Աստուածութեանդ քո. ի լրումն շինութեան կաթուղիկէ Եկեղեցւոյ։ Եւ կարկառեա՛ ի վերայ իմ զամենամերձ աջ քո. և զօրացո՛ զիս շնորհօք գթութեանդ քո. փարատեա՛ ի մտաց իմոց զմէգ մթութեան մոռացութեան. ապաքինեալ ընդ նմին զխաւար մեղաց. ամբառնալ ուշիւ իմաստիցս ի կենցաղոյս երկրէ ի բարձունս։ Լուսաւորեա՛ յիս վերստին զծագումն անստուեր հրաշից գիտութեան Աստուածութեանդ քո հզօր. արժանի լինիլ առնել և ուսուցանել յօրինակ բարեաց Աստուածասէր լսողաց։ Եւ քեզ ամենայն փառք յամենայնի, ընդ Հօր ամենակալի և ընդ Որդւոյն միածնի և բարերարի. այժմ և յանվախճան յաւիտեանս. Ամէն։



Աղբիւր կենաց բաշխող շնորհաց
Հոգիդ իջեալ ի բարձանց,
Զանապական պարգեւս քո
Բաժանեցեր յառաքեալս:

ԱՂՕԹՔ

ՎԱՍՆ ՆՆՋԵՑԵԼՈՅ

Աղաչեմ և խնդրեմ ի քէն ո՛վ բազմագութ Աստուած՝ վասն ազգիս մերոյ հնոց և նորոց և համօրէն հաւատով և յուսով ի քեզ ննջեցելոցն։ Եւ մանաւանդ՝ վասն իմոց մարմնաւոր և հոգևոր ծնողաց, եղբարց, քերց, ազգականաց, սիրելեաց, ի բարիս կրթողաց և ուսուցչաց, և բարեկամաց, և հոգևոր վարդապետաց և ամենայն աշխատաւորաց եւ երախտաւորաց մերոց ի քեզ ննջեցելոց։ Զորս յիշեսցես յողորմութիւնս քո յաւուր մեծի գալստեան քո. թողութիւն շնորհեսցես ամենայն մեղաց եւ սխալանաց նոցին. եւ դասեսցես ընդ սուրբս քո յաջակողման դասուն. եւ տացես լսել զերանաւէտ բարբառն քո թէ՝ եկա՛յք օրհնեալք Հօր իմոյ. և ըստ երախտեաց նոցին որ առ մեզ՝ միոյն բիւրապատիկս հատուսցես ի հոգիս նոցա. և զմեզ անդատապարտ արասցես ի նոցին պարտուցն. և քեզ փառք յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

ԱՂՕԹՔ
ՏԷՐՈՒՆԱԿԱՆ

Որպէս պատուիրէ Փրկիչն մեր.

«Ցորժամ կայցէք յաղօթս,
մի՛ շատախօսք լինիք»:
(ՄԱՏԹ. Զ. 7)

Հա՛յր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո։ Եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր։ Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց։ Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն. այլ փրկեա՛ զմեզ ի չարէ։ Զի քո է արքայութիւն, և զօրութիւն, և փառք յաւիտեանս. Ամէն։